

Н А Р М .
3-60а

КРЕСТЬЯНСКАЯ ИПРКГИШЕЛЬ
ДАЗЕМСЛ КИЗИСИСИ

Р. ՌԵԶՆԻԿՈՎ


Ամսի ԹԵՐԹԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ
ԱՌԱՋԱՆՔԸ ԿՈԼՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1189

Դասախոսություն հիմքերով

ԿՈԼՏԱՏԵՍՄԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դասախոսությունները լույս են տեսնում „Խորհրդային
Հայաստան“-ի պատում՝ Խմբագիր Հ. ՀՈՎՀՈՎ ՆԻՍՅԱՆԻ
ընդհանուր Խմբագրությամբ



ՀԿ(Բ)ԱԿԱ ԽՐԱՅՐԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — „ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“
ՏԵՐԵՎԱՑ

1936

24 JUL 2013

14987

Դասախոսությունները լույս են ընծայվում „Խորհրդ. Հայա-
տան“-ի խմբագրության կից կազմակերպված մերդական հանձ-
նաժողովի Կողմից իրմիք ընդունելով „Կրեստյանակայա Պազե-
տա,“-ի ուսումնական կոմիտեական հետարակած գասախոսու-
թյունները:

Կուտանաքին-բրիգադային պատի թերթերի խմբագիրների Հա-
յատանի հետակա ուսուցման գասընթացների դեկանար, „Խոր.
Հ.Ռ.-ի բանգյուղբակիցների բաժնի վարիչ՝ Մ. ՄԱՐՏԻԿՅԱՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍ
ՆՈՒՄ ՀԵՏՎՅԱԼ, ԵՎՅՈՒՆԵՐԻՎ.

ՈՒԿՐԱՅՆԵՐԵՆ,
ԲԵԼՈՌՈՒՆԵՐԵՆ,
ԹԱԹԱՐԵՐԵՆ,
ԿԱԶԱԿԵՐԵՆ,
ՎՐԱՅԵՐԵՆ,
ՀԱՅԵՐԵՆ,
ԹՈՐՔԵՐԵՆ,
ԲԱՇԿԻՐԵՐԵՆ,
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ,
ՈՒՁԲԵԿԵՐԵՆ

07
Դ-28

19 JUN 2009

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Ե ԽՈՍՎԵԼՈՒ ԱՅՍ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Կուլտուրան շատ ընդարձակ հասկացողություն է: Հավանո-
ւեն գուշ լսել եք, զոր ազրոնումները, խոսելով ցորենի, կորեկի,
վուշի և իրենց աճեցրած այլ բույսերի մասին, յերբեմն այդ
բույսերին կուլտուրա յեն ասում: Տվյալ դեպքում կուլտուրա
ասելով հասկանում են այն, ինչ աճեցվում, մշակվում է, ինչի
վրա աշխատում են: Դրանով մարդու կողմից մշակվող ու ա-
ճեցվող բույսը տարբերում են վայրենի վիճակում, ինքն իրեն,
առանց ցանելու աճող բույսից:

«Կուլտուրա» բառի այսպիսի հասկացողությունը ամենից ա-
վելի հին է և հավանորեն ամենաճիշտը: Այն ամենը, ինչ բա-
ռիս լայն իմաստով՝ մարդկային աշխատանքի արդյունք և հան-
դիսանում, սկսած բրուտի կճուճից մինչև հորակապ պալատները
և հանճարեղ յերաժշտությունը, կարող է կուլտուրայի շարքը
դասվել:

Հողը մշակելով, քաղաքներ, գործարաններ կառուցելով,
մեքենաներ պատրաստելով, կենդանիների նոր ցեղեր առաջացնե-
լով, այսինքն՝ կուլտուրան առաջ մղելով՝ մարդը վերափոխում է
և ինքն իրեն, նա ինքն ել ավելի կուլտուրական է դառնում:
Նա ավելի գրադեստ է դառնում, նրա միտքը զարդանում է և
մենք խոսում ենք կուլտուրական մարդկանց մասին:

Ժամանակակից մարդկային հասարակությունը համեմատե-
լով տասնյակ հազարավոր տարիներ մեղանից առաջ յեղած նա-
խազատմական մարդկային հասարակության հետ, յերբ մարդիկ
նոր եյին միայն սովորել կրակ ստանալ, և ապրում եյին քա-
րանձավներում և վողորմելի հյուզերում, մենք ասում ենք,
«Մարդկությունը կուլտուրական բարձր մակարդակի յե հասել»:
Այդ նշանակումը է, վոր մարդիկ սովորել են բնությունը հարմա-

Սբրագրիչ Ա. Հայովերդյան
Քւաղաքական լիազոր Ա. № 1015

Պատուի Ա. Հայովերդյան
Քւաղաքական լիազոր Ա. № 1015



165-87

բեցնել իրենց կարիքներին։ Վորպես պարզ որինակ վերցրեք քա-
չող ուժը։ Ինքը՝ մարդը, վորքան ել առողջ լինի, Փիղիքական
մեծ ուժ չունի։ Սակայն նա աստիճանաբար վարժեցրել և կեն-
դանիներին և ստիպել, վոր իր համար աշխատեն։ Մարդն աճե-
ցըրել և ձիու նման հիանալի կենդանու բազմապիսի ցեղեր։ Այդ
մարդկային կուլտուրայի մի խոշոր նվաճում եր, վորի վրա
տասնյակ հազարավոր տարիներ, գուցե և ավելի յերկար ժա-
մանակ և գործադրվել։ Սակայն ձիու ուժն ել սահմանափակ և :
Իսկ տնտեսությունը շարունակում եր աճել, մարդիկ շատա-
նում եյին, հարկավոր եր ավելի շատ բեռ փոխադրել մի տեղից
մի ուրիշ տեղ։ Այդ ժամանակ մարդը հնարեց շողեմեքենան,
յերկաթուղին, կարողացավ գոլորշուն ստիպել, վոր իր համար
աշխատի։ Յերբեցե դուք քաղաքում տեսնել եք, թե ինչուս
յերեք առողջ ձի մի աայլի լծած 200 փութ բեռը հազիվ հազ
են քաշում։ Համեմատեցեք այդ ձիերը ժամանակից շողե-
քարշի հետ, վորը հեշտությամբ և հայտական արագությամբ
քաշում և գնացքը հազարավոր փութ բեռներով։ Դրանք կուլ-
տուրայի յերկու տարրեր մակարդակներ են։ Սակայն մարդը բացի
շողեքարչ մեքենայից, հնարեց նաև ելեկտրական շարժիչ և
ներքին այրման շարժիչ, վորոնք այժմ գտնվում են տրակտորի,
ավտոմոբիլի վրա։ Մեր աչքի առաջ տեղի յե ունենում Խորհր-
դային յերկրի տեխնիկական վերազինում։ Դեռևս տասը տարի
առաջ մեզ մոտ հողը մշակվում եր ձիերի ու յեղների ուժով,
իսկ այժմ կենդանի քաջող ուժին ողնության են յեկել հարյուր-
հազարավոր տրակտորներ, տասնյակ հազարավոր կոմբայններ ու
ավտոմոբիլներ։

Ճիշտ այդպես ել կարելի յե տեսնել կուլտուրայի մակար-
դակի աճումը մարդկային աշխատանքի բոլոր բնագավառներում։

Մարդկային կուլտուրան շարունակ աճել ու զարգացել և :
Սակայն դասակարգերի բաժանված հասարակությունում, այն
հասարակությունում, ուր կան ճնշվածներ ու ճնշողներ, աշխա-
տավորներ ու պարագիտներ, այդպիսի հասարակության մեջ
կուլտուրան բոլորի համար հավասար չափով չի զարգանում։
Կուլտուրայի պտուղները, վոր ստեղծում են աշխատավորները,
բաժին են ընկում պարագիտներին, հարուստներին, իսկ ժողո-
վրդի ճնշող մեծամասնությունը խարիսխում են անկուլտուրա-
կանության մեջ։ Որինակ՝ մարդիկ վազուց են սովորել հիա-

նալի տներ կառուցել, սակայն նրանց մեծ մասն ապրում է կեղ-
տառ խրճիթներում։ Մարդիկ վազուց են ձեռք բերել եւեկտրա-
կան լուսավորությունը, սակայն հին Ռուսաստանի գյուղերի մեծ
մասում միակ լուսավորությունը մըուտ մարին եր։

Կամ վերցնենք գրագիտությունը։ Գիտությունը վերջարի
բարձունքների յե հասել, սակայն այն յերկրներում, ուր կա-
պիտավորմն և տիրապետում, հարյուր միլիոնավոր մարդիկ դեռ
անդրագետ են մնացել։

Ինչի՞ հետեւանք և մարդկանց կուլտուրականության այսպիսի
տարբերությունը։ Դա հետեւանք և այն բանի, վոր շահագոր-
ծող գասակարգերին, ճնշողներին ճենանուու չե, վոր ժողովուրդոն
ոգումի կուլտուրայի նվաճումներից։ Նրանց ձեռնաու յե ժողո-
վուրդը պահել իսպարի ու տղիսության մեջ։ Յեկ տերտերներն
ոգում են նրանց այդ գործում։ Կապիտալիստներն ու կալվածա-
տերները ժողովրդին տալիս եյին կուլտուրայի նվաճումների վրը-
րանքները միայն։ Նրանք բանվորներին գրագիտություն սովո-
րելն ել թույլատրում եյին միայն այն պատճառով, վոր անդրա-
գետ բանվորն ավելի քիչ ձեռնաու յե, նրանից քիչ շահ կարելի
յե քամել։

Մեր յերկրում կապիտալիստները, շահագործողները ընդմիշտ
դեն են զգբաված։ Յեկ մենք տեսնում ենք, թե կուլտուրան
ինչպես արագ և աճում ամբողջ ժողովրդի համար։ Մեր յերկրին
ամենահետամնաց յերկրներից մեկն եր ։ Բացի այդ, յեր յերկրին
ավելեց նաև իմպերիալիստական պատերազմը, իմլ հետո՝ քաղա-
քացիական պատերազմը։ Մենք ստիպված յեղանք մի քանի տարի
կովել թշնամու դեմ, իսկ հետո՝ մեղ խանգարում եյին դանագան
վնասաբարներն ու կուլտակները, բայց և այնպես մեր ժողովուրդը
բոլցիկիցան կուսակցության զեկավարությամբ, մեծ Ստալինի
զեկավարությամբ չունաված կարճ ժամանակմիջոցում մեր
յերկրիր ժարդեց աշխարհի ամենաառաջավոր յերկրներից մեկը։
Յեկ այժմ տարեց տարի մենք զառնում ենք ավելի ուժեղ, ավելի
հարուստ, ավելի կուլտուրական։ Աճում և յերկրի կուլտուրայի
ժակարդակը, ամբողջ ժողովրդի կուլտուրան, զարգանում է
կուլտուրան բոլորի համար և վոչ թե մի բուռն ընտրյաների
համար։

1918 թվի հունվարին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ
հեղափոխության հենց սկզբին վ. ի. Լենինն ասում եր.

«Առաջ ամբողջ մարդկային միտքը, նրա ամբողջ հանձարնը ստեղծագործում եր, վորագեսպի վոմանց տա տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մյուսներին զրկի ամենաանհրաժեշտից — լուսավորությունից ու զարգացումից: Իսկ այժմ տեխնիկայի բոլոր հրաշալիքները, կուլտուրայի բոլոր նվաճումներն ընդհանուրի սեփականություն կդառնան: և այսուհետեւ մարդկային միտքն ու հանձարը յերբեք չին վերածվի բոնության միջոցի, շահագործման միջոցի»:

(Անին, յերկերի ժողով. ոռուս. Հրատ. Հատ. ԽII
Էջ 225)

Անինի այդ մարգարեական խոսքերը ամենայն հետեղողականությամբ իրականացվում են բոլցեիկյան կուսակցության կողմից, ժողովրդների առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

Ինչպես տեսնում եք, կուլտուրային վերաբերող թեժան շատ ընդարձակ է: Մեր գասախոսությունով այն սպառել չի լինի: Կուլտուրայի մասին շատ գրքեր են գրվել: Ուրեմն ինչի՞ մասին ենք խոսելու այս գասախոսության մեջ: Գյուղում կատարվող կուլտուրական աշխատանքի մասին: Մենք չենք շոշափի տնտեսության կուլտուրայի հարցերը, հողագործության տեխնիկայի մակարդակի հարցը, թեեւ տնտեսությունն այն հիմքն է, վորբեր վրա խարսխված են մյուս բոլոր պայմանները: Մենք պետք ենունք գյուղում կատարվող կուլտուրական—լուսավորական աշխատանքի մասին և այդ կապակցությամբ՝ կոլտնտեսային ոլատի թերթերի խնդիրների մասին: Այդ ես, ինչպես մենք այժմ կտեսնենք, իսկառ կարենոր գործ ե: Մարդկանց կուլտուրական մակարդակի բարձրացումը, նրանց գիտակցության զարգացումը, կուլտուրական պահանջների նկատմամբ նրանց ճաշակի զարգացումն ողնում են նաև տնտեսության կուլտուրայի բարձրացմանը, ողնում են տեխնիկայի լավագույն յուրացմանը:

ԲԱՑ Ե ՍՔԱՆՉԵԼԻ ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Վերը մենք ասացինք, վոր կապիտալիստական հասարակության մեջ կուլտուրան զարգանում ե վոչ բոլորի համար: Այդ սունձնապես պարզ ե յերեսում, յերբ մենք դիտում ենք դյուզը: Գյուղը կուլտուրական տեսակետից միշտ ել յեղել ե ամենաթըշվառը և վորտեղ դեռ կապիտալիզմ գոյություն ունի, այժմ ել դյուզն այդպիսին ե: Գյուղում ցածր ե տնտեսության կուլտուրան, ցածր ե և այն ամենը, ինչ վոր մենք սովոր ենք հասկանալ կուլտուրա ասելով: Գյուղում ցածր ե մարդկանց կուլտուրական մակարդակը, այնտեղ ամելի քիչ գրագետ մարդիկ կան, քան քաղաքում: Յարական մուսաստանում յերբ մեկի մասին ուղում ենին ասել, վոր նա հետ ե մնացել, անկուլտուրական ե, կոպիտ, անտաշ ե, ասում ելին «գյուղացի յե»: Քաղաքի ու գյուղի միջև անկունդ գոյություն ուներ նաև կուլտուրական բնագավառում:

Միայն մեզ մոտ, խորհրդային յերկրումն է, վոր կուլտուրան իսկապես մուտք ե գործել գյուզը: Կոմունիստական կուսակցությունն իրեն խնդիր ե դրել՝ կուլտուրան գյուղում այնպես բարձրացնել, վոր լիովին վերանա գյուղի ու քաղաքի միջև յեղած հակառարությունը: Այդ խնդիրը բոլցեիկյան յեռանդով իրագործվում ե մեր աշքի առաջ և քանի զնում՝ այնքան ամելի արագ թափակ ե իրագործվում:

Փորձեցեք նախահեղափոխական գյուղը համեմատել ներկայիս կոլտնտեսային գյուղի հետ: Առաջին իսկ հայացքից դըմքար ե ճանաչել գյուզը. այնքան ե փոխվել նա: Զին գյուղում ընակչության մինչև 80 տոկոսն անդրագետ եր, իսկ այժմ անդրագետները շատ քիչ են և ամեն գյուղում ել անդրագետ չես գըտնի: Զին գյուղը գիտե՞ր թե ինչ բան ե ակումբը կամ խրճիթընթերցարանը: Զդիտեր: Իսկ հիմա մեր յերկրում տասնյակ հազարավոր կոլտնտեսային ակումբներ կան: Ասենք՝ յուրաքանչյուր մարդ իր գյուղի որինակով ել տեսնում ե այդ տարբերությունը:

Առաջ գյուղը կուլտուրապես շատ հետամնաց եր և այժմ՝ նու ավելի արագ թափով պիտի առաջադիմի: Յել այդպես ել և: Գյուղում բազմաթիվ գաղրոցներ են կառուցվում, բազմաթիվ մարդկի են սովորում, կառուցվում են բազմաթիվ հիմանդանոցներ և այլն:

Սակայն, հարկ չկա ծածկելու, վոր վորքան ել արագ և աճում կոլտնտեսային գյուղը, այնուամենայնիվ, նրա մեջ քիչ չեն անկուլտուրականության մնացորդները, գեռ կան մարդիկ, վորոնք թերթ չեն կարդում, կան մարդիկ, վորոնք յերբեք կինո չեն տեսել, չի կարելի առել, թե ամենուրեք վոչնչացվել են կեղան ու միջատները: Դեռևս շատ ու շատ աշխատանք կա կատարելու: Յել կոլտնտեսությունների պատի թերթերը պետք եւ տեսնեն ու իմանան այդ աշխատանքը, վորպեսի ուժերը ներածին չափ ոգտակար մասնակցություն ունենան կուլտուր—լուսավորական աշխատանքներին:

Գլխավորն այն չե, վոր մեր գյուղում գեռիս կուլտուրական հետամնացություն գյուղություն ունի: Գլխավորն այն և, վոր մենք կարող ենք արագորեն վերացնել այդ հետամնացությունը, վոր մենք կարող ենք կուլտուրապես ավելի արագ աճել, քան աճում ենք ներկայումս: Հենց կոլտնտեսային կարգի հիմքում կուլտուրական արագ աճման անսահման հնարավորություն ներ կան:

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Վ. Մոլոտովը 1935 թվի գեկտեմբերի 19-ին Ռուբեկատանի, Կազախստանի և Կարակալպակիայի առաջավոր կոլտնտեսությանների ու կոլտնտեսությունների խորհրդակցության արտասահմանի համար հասուամաց խորհրդակցությունների նախագահին առաջարկեց կուլտուրայի մասին հետեւյալն առաց.

«Այս տարի առաջին անգամ Մոսկվա յեն յեկել առաջավոր բամբակագործ կոլտնտեսականների պատգամավորությունները և տեղեկություն են բերել իրենց նշանակալից հաջողությունների մասին: Զեր միջոցով այդ հաջողությունների մասին այսուեղ խոսում են հազարամուր ու հազարամուր առաջամարտը կոլտնտեսականներ, վորոնք վերջնականապես կանգնել են նոր ձանապարհի վրա և արդեն հսկացել են, վոր այդ աշխատավորությանը յերջանիկ կյանքի տանող միակ ձանապարհն է: Այդ առում և այն մասին, վոր նաև այսուղ,

ուր աշխատավորության ձնշումն ու մասսաների հետամնացությունն առանձնապես մեծ ելին, այնտեղ ևս այժմ խփում ենոր, խավարից ազատագրված կյանքի աղբյուրը, վոր այնտեղ ևս նոր մարդիկն են առաջ անցել, մորոնք այժմ բազում հազարներով են հաշվվում և վորոնց հետեւ արդեն միլիոններ են գնում:

Այժմ, յերբ այդ միլիոններն զբացել են, վոր իրենք են իրենց կյանքի ստեղծողները, զլանալոր, վորի կարիքը նրանք գգում են, այդ կուլտուրան է: Աշխատավորության կուլտուրականության աճումը մեր ներկա հաղթանակների հիմնական պայմանն է:

Ռողբեկստանի, Կազախստանի և Միջին Ասիայի մյուս հանրապետությունների ու աղգային մարզերի կուլտուրականությունն արագորեն աճել է խորհրդային իշխանության տարիներին: Այդ են վկայում աշխատավորության դրագիտության աճումը, աղգային մամուլի աճումը և այլն:

Սակայն միայն դբանով չե, վոր յերեսում և աշխատավորության կուլտուրականության աճումը:

Կոլտնտեսություններում, կոլտնտեսականների հանրային աշխատանքի մեջ ևս աճում է մեր նոր կուլտուրան: Թեկուզ հենց նրանից, ինչ վոր մենք լսեցինք այս խորհրդակցությանը, յերեսում և, վոր ձեզ մոտ կոլտնտեսություններում արագորեն աճում են բամբակագործության վարպետների նոր կառը բեր: Աճում են նոր տիպի փորձի ագրոնոմներ, աճում են բամբակագործության խոչոր կաղմակիչների աշխատանքում, ինչպես և մեր բոլոր սոցիալիստական ձեռնարկություններում կոփկում և նոր կուլտուրան, աճում են նոր կյանքի գիտակից կառուցողները:

Խորհրդային կարգն ապահովում է նոր, սոցիալիստական կուլտուրայի արագաթափ աճը: Նոր կյանքի ստեղծմանը ակտիվորեն մասնակցելու այն հնարավորությունը, վոր բոլոր աշխատավորների համար ստեղծվում է խորհրդակցին կարգի ու նրա կոլտնտեսությունների չնորհիվ, իր սոցիալիստական ձեռնարկությունների չնորհիվ, —մասսաներին խավարից հանում և գեպի լույսը, գեպի կուլտուրական մարդկանց գիտակից կյանքը: Նոր կուլտուրան և աշխատավորության կուլ-

տուրականությունն աճում և վոչ միայն դպրոցական նստարանի վրա, այլ և աշխատանքի մեջ, մանավանդ այն ժամանակից, յերբ այդ աշխատանքը դարձավ հանրային ու կազմակերպված՝ մեքենաների և ընդհանրապես նոր տեխնիկայի լոյն կիրառումով։

Սակայն աշխատավորության կուլտուրականության իսկական աճը հասրավոր և ապահովել միայն գրադիտության, ազգային մամուլի և կուլտուրական հիմնարկությունների հետազա լսատամենայնի զարգացումով՝ մայրենի լեզվով։ Բերքի և կոլտնտեսությունների յեկամուտների աճումն աշխատավորության մեջ արթնացնում և կուլտուրայի նոր ու ավելի բարձր պահանջներ և դրա հետ միասին կուլտուրականությանն ել ավելի արագ բարձրացման հասրավորություն և ստեղծում։ Այժմ մեր միության մեջ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծված, վորպեսդի ԽՍՀՄ-ի բոլոր աղջությունները, կուլտուրայի նկատմամբ ունեցած իրենց բոլոր ազգային բազմապիսի պահանջներով կարողանան լիակատար բավարարություն ստանալ։

Կոլտնտեսությունները գյուղացիներին դեպի ունեոր կյանք են տանում։ Իսկ ունեոր կյանքը կոլտնտեսություններում՝ նրանակում են անե կուլտուրական կյանք։ Ունեվորությունն ու կուլտուրականությունը միենույն բանի յերկու անբաժան կողմերն են։ Մենք այդ հենց իրականումն ել ենք տեսնում։ Մեծ յեկամուռ ստացող կոլտնտեսականներն ավելի ու ավելի շատ են ձգտում կուլտուրայի, ել ավելի շատ հնարավորություն են ունենում բավարելու իրենց կուլտուրական պահանջները։

Կոլտնտեսությունների յեկամուտները տարեց տարի աճում են և ավելի արագ պիտի աճեն։ Յեկամուտների մի մասը պիտի գործադրվի կոլտնտեսային տնտեսության ընդարձակման ու հետազա զարգացման վրա։ Իսկ ի՞նչ պիտի անի կոլտնտեսականն իր ավելցուկ յեկամուտը։ Հասկանալի յեւ, վոր գործադրելու յեւ կուլտուրական պահանջների բավարարման ուղղությամբ, վորպեսդի զարգարի իր տունը, իր գյուղը, վորպեսդի ավելի գեղեցիկ, ավելի կուլտուրական կյանք վարի, վորպեսդի հաճախի կիսո, թատրոն, ուղիղո ձեռք բերի, բարձրացնի իր գրադիտությունը, իր կուլտուրական մակարդակը։ Յեվ յեթե այժմ գորոշ կոլտնտեսություններից կոլտնտեսականները ավտոմեքե-

նաներով գնում են քաղաք՝ վորպեսդի կինոնկար տեսնեն, կամ թատրոնում՝ ներկայացում տեսնեն, ապա շուտով կինոն ու թատրոնը կդան կոլտնտեսություն, իսկ ավտոմոբիլները, հասկանալի յեւ, գյուղում ավելի շատ կլինեն։

Գյուղում առաջ հարուստներ կային։ Վերցնենք նույն կուլակը։ Նա ունեոր կյանքը եր վարում, սակայն կուլտուրակա՞ն եր նրա կյանքը։ Վո՞չ։ Կուլակի ամբողջ հարստությունը գործադրվում եր այն նպատակով, վոր ընդարձակի չքավորությանը գաղանաբար շահագործելու թի հնարավորությունները, վորպեսդի փող կուտակի և գործադրի այն ավելի շատ մարդիկ ստրկացնելու համար, իսկ ինքը բռի ու տգետ կյանք եր վարում։ Լայնակող գրամաֆոնն ու սըբապատկերը կուլակի «կուլտուրականության» միակ ցուցանակն եյին։ Այժմ կոլտնտեսություններում կուտակում ել լինում, սակայն ընդհանուրի բարիքի համար։ Շուտով կոլտնտեսությունները կոլտնտեսականներին այնպիսի յեկամուտներ կտան, վորպիսին կուլակը յերազում ել չի տեսել և այդ յեկամուտը կործադրվի մարդկանց կուլտուրական պահանջների բավարարման համար։ Այս ե սոցիալիզմի եյությունը։ Նա նպաստում ե մարդու կյանքի ծաղկմանը և նրան կուլտուրական բարձր մակարդակի յեւ հասցնում։ Կոլտնտեսությունները գյուղացիներին աղատեցին կուլակային շահագործումից, հայիտենական աղքատությունից և նրանց համար բաց արին յերշանիկ, կուլտուրական կյանքի ուղին։

Սակայն, ինքն իրեն, ինքնահոսով վոչինչ չի գալիս։ Լավ կյանքը ձրի չի տրվում, նրա համար պետք ե պայքարել, պետք ե աշխատել։ Գլխավորն արված ե։ Կոլտնտեսությունները կան։ Կոլտնտեսային կարգը հաղթանակել ել վերջնականապես և ընդմիշտ։ Այժմ պետք ե բոլոր ուժերն ուղղել կոլտնտեսությունների ամրապնդման, յեկամուտի ավելացման, կուլտուրական աշխատանքի վրա, իսկ այդ աշխատանքը, ինչպես ասացինք, փոքր չեւ։

Ստախանովյան շարժման զարգացումը վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում կոլտնտեսությունների աճման լավագույն ցուցանիչն ե, աշխատանքի արտադրողականության աճման և կոլտնտեսությունների կուլտուրայի բարձրացման ցուցանիշը։ Ստախանովյականները գյուղի առաջարկում մարդկին են։ Պատի թերթը պետք ե նրանց գրալի իր աշխատանքների մեջ, վորպես ակտիվ

գյուղթղթակիցներ, վորպես նոր, սոցիալիստական կուլտուրա-
յի ակտիվիստների: Պատի թերթի խմբագիրը թերթի առաջնա-
կարդ պարտականություններից մեկը պիտի համարի ակտիվ ու-
ժառական ողություն ստախանովականներին՝ նրանց կուլտուրա-
կան մակարդակի բարձրացման, նրանց վորպակի բարձրացման
գործում: Այնպիսի հարցեր, ինչպիսին ստախանովականների ու-
սուցումն ե, նրանց համար գասարաններ առանձնացնելը, նրանց
ուսումնական պիտույքներ մատակարարելը, կուլտուրական աշ-
խատանքի ու կյանքի լավագույն պայմանների ստեղծումը, այս
ամենը չպետք է գուրս մնան պատի թերթի եջերից:

ԳՐԲԵՐԻ, ԹԵՐԹԵՐԻ ՅԵՎ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայումս գյուղում կուլտուրական աշխատանքի հիմնա-
կան հարցը գրադիտության հարցն ե: Առանց գրագիտության,
առանց գրադիտության անընդհատ աճման վոչ մի կուլտուրա-
ստեղծել չես կարող: Գրագիտությունը տարրական, հասարակ
դործ ե, սակայն միանդամայն անհրաժեշտ ե:

Հեղափոխությունից հետո գրագիտություն տարածելու ուղ-
ղությամբ վիթխարի աշխատանք ե կատարված: Մենք համատա-
րած գրագիտության հասանք ինչպես քաղաքում, այնպես ել դյու-
զում: Տասնյակ միլիոնավոր մարդիկ սովորել են գրագիտական
դպրոցներում: Սակայն, սիալ կլինի կարծել, թե գրագիտության
ամբողջ հարցը գրագիտական դպրոցներով ե լուծվում: Միմիայն
ինքնական բյուրոկրատները կարող են մտածել, թե՝ անդրա-
գետներին սովորեցրել ենք այբուբենը, վանկ-վանկ կարդալը,
մինչեւ հարյուր հաշվելը—և արդեն բավական ե: Վո՛չ, գրադի-
տությունը պետք է ուժեղացնել, պետք ե առաջ շարժվել,
հակառակ դեպքում անդրագիտության վերադարձն անխուսափե-
լի յե: Գրագիտություն սովորած մարդկանց մեծ մասն, ի
հարկե, առաջ ե գնում, շարունակ կարդում ե, աճում, ավելի
կուլտուրական ե դառնում: Սակայն, կան ե այնպիսիները, վո-
րոնք չեն կարգում, չեն գրում և գրագիտական դպրոցներում
սովորածն ել արդեն մոռացել են:

Նշանակում ե՝ կոլտնտեսային կամ բրիգադային պատի
թերթի առաջին ինդիքն ե՝ թույլ չտալ, վոր մարդիկ կուլտու-

րապես հետ մնան, այլ ոգնել նրանց, վոր առաջ շարժվեն:
Պետք ե սոսուզել, թե տվյալ կոլտնտեսությունում կամ բրիգա-
դում դեռ կա՞ն արդյոք անդրագետներ և յեթե կա թեկուզ մեկը
(չհաշված զառամյալ ծերունիներն ու նախալպրոցական տա-
րիքի յերեխանները), հարկավոր ե այնպես անել, վոր այդ մի
հոգին ել գրագետ դառնա: Պարզ ե, վոր յեթե անդրագետներն
ավելի շատ լինեն, պետք ե ավելի ևս լուրջ ձեռնամուխ լինել
այդ գործին: Ամենից առաջ հարկավոր ե այդ հարցի մասին
թղթակցություն տեղավորել, թե՝ «կոլտնտեսության վարչու-
թյունը, կոմյերիտական կալմակերպությունը գիտե՞ն արդյոք,
վոր մեղ մոտ գեռես անդրագետներ կան»: Կամ թե՝ «կոլտնտե-
սությունում վոչ մի անդրագետ չպետք ե լինի»: Յեվ հետո՝
պետք ե պարբերաբար հաղորդել, թե ինչպես ե ընթանում ան-
դրագիտության մնացորդների վերացումը: Զե՞ վոր կարող է
լինել այսպես—գրագիտական դպրոց կա, անդրագետների ցու-
ցակը կաղմված ե, ուսուցիչն ել առանձնացված ե, բայց անդրա-
գետները չեն սովորում: Ահա, այդպիսի դեպքում պետք ե
աշխատել, վոր միջին մեծահասակ անդրագետներն ել իրոք գրա-
գիտություն սովորեն: Դրան հասնելը դժվար չի լինի, յեթե թեր-
թը գրա մասին դրի:

Բայց, ընդունենք, թե տվյալ կոլտնտեսությունում բոլորու-
մին անդրագետ մարդ չկա, բոլորը գրել—կարդալ դիտեն: Այն
ժամանակ թերթն իր առաջ խնդիր պիտի դնի—այնպես անել,
վոր բոլորը կարողանան թերթեր ու գրքեր կարդալ: Կոլտնտե-
սությունում չպետք ե լինի հասակավոր մարդ, վորը տապագիր
թերթեր չկարդա: Գուցե կատեն, թե այդ դեպքում թերթերը
չեն բավականանա: Սակայն այդ ճիշտ չե: Պարտադիր չե, վոր
բոլորն ել կենտրոնական թերթեր կարգան. կարելի յե բավա-
կանանալ տեղական մարզային կամ շրջանային թերթերով: Սա-
կայն անպայման հարկավոր ե մարդկանց վարժեցնել կարգալու:
Յեթե կոլտնտեսության յուրաքանչյուր ընտանիքին թերթ չի
հասնում, յարելի յե թերթ կարդալ իրադիթ-ընթերցարանում
կամ ակումբում:

Ինչպես մարդկանց վարժեցնել թերթ կարդալու: Ամենից ա-
ռաջ պետք ե այնպես անել, վոր թերթերը կանոնավոր հասնեն
բաժանորդին, վոր տեղական փոստային բաժանմունքը լավ աշ-
խատի, վոր գյուղխորհուրդը հսկի այդ գործին: Հարկավոր ե

ընթերցողներին խորհուրդ տալ, թե ինչ կարդալ: Որինամի՝ պատի թերթի հերթական համարում կարելի յե գրել. «Ընկերներ, «Խորհրդային Հայաստան» թերթի այսինչ որվա համարում կարդացեք այսինչ հոդվածը. այնեղ դուք շատ հետաքրքիր բաներ կդանեք»: Բոլորը պատի թերթը կարդան և կհետաքրքրվեն հանձնարարված հոդվածով: Մեկ յերկու անդամ այդպես թերթում գրելուց հետո ընթերցողներն արդեն իրենք կսկսեն տպագիր թերթում վորեե հետաքրքիր բան վորոնել: Յեվ, ի հարկե, հետաքրքիր բան կդանեն: Բավական ե, վոր մարդ վարժվեց թերթ կարդալու, այնուհետև արդեն դժվար կլինի առանց թերթի, այնպես, ինչպես առավոտյան վեր կենալուց հետո մարդ չէ կարող չլվացվել:

Առանց թերթի կանոնավոր ընթերցանության չի կարող լինել տեխնիկական ու քաղաքական գրագիտության աճում: Այդպետք ե լավ հիշել: Պատի թերթի միջոցով մարդկանց պիտի վարժեցնել կանոնավոր թերթ կարդալու:

Իսկ գրքի՞ր: Մի՞թե պատի թերթի ուղղակի պարտականությունը չի՝ պրոպագանդ մզել, վոր կոլտնտեսականները գրքեր ևս կարդան: Մեր գյուղերում արդեն գրադարաններ ու գրավաճառնություններ կան: Պատի թերթը պետք ե պարբերաբար տեղեկացնի, թե գրադարանում ինչ նոր գրքեր ե ստացվել և ինչ նոր գրքեր կարելի յե գնել գրախանությում: Կարելի յե պայմանավորվել գրադարանապետի ու գրավաճառի հետ, վոր նրանք կաղման այդ տեղեկությունները: Լավ կլինի այդ տեղեկություններում ասել նաև, թե ինչի մասին ե խոսվում տվյալ գրքի մեջ, ինչ կարելի յե սովորել նրանից: Զպետք ե կենտրոնական թերթի գրախոսականները՝ տվյալ գրքի մասին կտրել ու կողցնել պատի թերթին, ինչպես անում են մի շարք պատի թերթերի խմբագիրներ: Զպետք ե այդպես վարմել, վորովհետեւ կենտրոնական թերթում գրախոսականները գրվում են ընթերցողների վորուշ շրջանակի համար, իսկ պատի թերթը՝ ուրիշ շրջանակի համար ե:

Յեթե ուղում եք ձեր ընթերցողների ուշադրությունը հրավիրել այս կամ այն գրախոսականի վրա, ուղղակի պատի թերթում գրեք, վոր այսինչ թերթի այսինչ համարում գրախոսական կա այսինչ գրքի մասին, վոր յուրաքանչյուր ընթերցող կարող ե տեղի գրադարանում վերցնել և կարդալ:

Սակայն պատի թերթը նոր գրքի մասին միայն տեղեկություն տալով չպիտի բավարարվի: Հարկավոր ե հետաքրքրություն առանձացնել դեպի լավ գիրքը և ընթերցողներին ողնել հասկանալ այն:

Խմբագիրներին խորհուրդ ենք տալիս այսպիսի փորձ անել. զրադարանապետի ու դպրոցի լեզվի ուսուցչի հետ պայմանավորվել, վոր նրանք մի լավ գիրքը ընտրեն և թերթի միջոցով խորհուրդ տան բոլորին՝ կարդալ այդ գիրքը: Վորպեսզի գիրքն արագ կարդացվի, կարելի յե կոլեկտիվ ընթերցանություն կազմակերպել: Գիրքը կարդալուց հետո, թող յուրաքանչյուրն իր կարծիքը գրի նրա մասին: Այդ կարծիքներից ամենախելացիները տեղավորեցեք թերթում «այսինչ գրքի քննադատությունը» ընդհանուր վերնադրով:

Մմենեին ել պարտադիր չե, վոր բոլոր կոլտնտեսականներն առանց բացառության կարգացած վիճեն այդ գիրքը, վորպեսզի կարելի լինի կարծիքներ տպել նրա մասին: Բավական ե, վոր մի խումբ կոլտնտեսականներ կարդացած լինեն, այնուհետև թերթում տեղավորված կարծիքները հետաքրքրություն կառաջացնեն և բոլորն արագությամբ կկարդան այդ գիրքը:

Ի հարկե, գեղարվեստական գրքի մասին դրված կարծիքների մեջ վիճելի բաներ ել կլինեն, կարելի յե նաև արդ տեղակորել, ահայն ուսուցչիչը պետք ե բացատրի, թե ինչն ե ճիշտ, ինչն է վիճելի և ինչն ե սխալ: Կտորած չկա, վոր այդպիսի նյութը կարող ե աշխուժացնել վոչ միայն պատի թերթը, այլ և կոլտնտեսության գրադարանի աշխատանքը:

Դրական ստեղծագործությունների պրոպագանդի ուրիշ ձևեր ևս կարելի յե հանձնարարել: Գրականություն կարգալը կյանքն ուսումնասիրելու, ճանաչելու միջոց ե: Գրականության միջոցով, բացի նրա պատճառած հաճույքից, կարելի յե նաև ավելի լավ տեսնել կյանքը: Ահա, որինակ՝ Հովհաննես Գրիգորյանի «Գիրքը» պատմվածքը: Այս պատմվածքը կարդալուց հետո կարելի յե այն համեմատել կոլտնտեսային պատանեկության կյանքի հետ: Կստացմի հին ու նոր կյանքի իրական հակադրությունը: Դրանով միաժամանակ հետաքրքրություն կառաջանա դեպի գրականությունը: Ընթերցանությունը լուրջ ու ոգտակար գործ պիտի համարել և վոչ թե ժամանց: Գրական ստեղծագործություն և կյանքի համեմատությունն ընթերցողին կվարժեցնի խորա-

նալ գրքերի մեջ, հասկանալ նրա խմաստը, այսինքն, կրածրացընի նրա կուլտուրական մակարդակը:

Հասկանալի յէ, զոր կոլտնտեսականները կարդում են վոչ միայն գեղարվեստական, այլ և ուրիշ գրքեր: Պատի թերթում նրանց մասին ես պիտի գրել և ըստ հնարավորին տալ նրանց բովանդակությունը: Արինակ՝ գրադարանում մի գիրք և ստացվել այն մասին, թե հորթերն ինչպես պիտի պահել ու աճեցնել: Մեջ բերեք զրում յեղած մի քանի ցուցումները և հարց ավեք. «Իսկ մեղ մոտ ի՞նչ դրություն է: Կոլտնտեսությունում արդյո՞ք ամեն ինչ այնպես ե արվում, ինչպես դիտությունն ե պահանջում»:

Իհարկե, գրագիտության բարձրացման համար մղվող պայքարը միայն գրքեր ու ժուռնալներ կարդալու պրոպագանդով չի սպառվում: Հարկավոր և մարդկանց դպրոցներում սովորեցնել: Համարյա ամենուրեք գոյություն ունեն հասակավորների դպրոցներ, վորոնեղ ընդհանուր կրթական առարկաներ են դասավանդվում: Այժմ այդ գպրոցները շատ կարելոր են: Մեղ անհրաժեշտ ե բարձրացնել կոլտնտեսականների ընդհանուր կրթական մակարդակը:

Դյուլատնտեսական տեխնիկան աճում է, մեքենաների թիվն ավելանում է, ագրոտեխնիկան զարգանում: Առանց մարդկանց ընդհանուր կրթական մակարդակը բարձրացնելու գործն առաջ չի գնա: Ել չենք խոսում այն մասին, վոր կոմբայնավար քառուալու համար հարկավոր է վոչ միայն կոմբայնն ուսումնասիրել, այլև իմանալ ողեթ տարրական մաթեմատիկա, աշխարհագրություն, մայրենի լեզու, ինչպես և քաղցրադիտություն: Վերցնենք հենց բրդագիրին կամ ողակավարին: Նրանք ինչի՞ յեն պետք, վեթե դրագետ չեն: Դեռ շարքային կոլտնտեսականի համար ել առանց դրագիտության դժվար է յոլա գնալ: Մենք ընդհուպ մոտեցել ենք այն վիճակին, վոր բերքատվության տեսակետից հասնենք առաջապես կապիտալիստական յերկրներին և վոչ միայն հասնենք, այլև անցնենք: Բայց մի՞թե անդրադատ մարդկանցով կարելի յէ այդ անել: Մեղ վիճակին ե զրույց անել մի կոլտնտեսություն հետ, վորը կարողացել է հեկտարից 550 ցենտներ չափարի ձակնողեղ ստանալ: Այդ համարյա համաշխարհային ռեկորդ է; Յել պարզպեց, վոր այդ կոլտնտեսություն կիսագրադես է, նա զանգաւորմ եր, թե «դիտե՞ք, ինձ համար կրկնակի դժվար է աշխատել, քան գրագետ մարդու համար»:

Որինակ՝ հարկավոր և հաշվել, թե մի հեկտարում քանի արմատ կա: Յես լավ գիտեմ, վոր հեկտարում 110 հազարից պակաս չափարի լինի արմատների թիվը: Յեթի պակաս է, նշանակում է իր ժամանակին լրացուցիչ ցանք պիտի անել: Բայց ինչպես հաշվես: Գրադետները մի քանի քառակուսի մետր չափում են, հաշվում այդ տարածության արմատները, հետո թղթի վրա բաղմապատկում և իմանում, թե ամբողջ մի հեկտարում քանի արմատ կա: Յես բաղմապատկումը չեմ հասկանում և ստիպված եմ լինում սողալ ամբողջ պլանտացիան և հաշվել բոլոր թիվերը»:

Այս գանգատը շատ բնորոշ է: Այստեղ մենք տեսնում ենք, թե բերքատվության բարձրացումն ինչպես է զեմ առնում թրվաբանության շորս գործողություններին: Գյուղացիները հազարամբոր տարիներ աշխատել ու յոլա յեն գնացել առանց գրագիտության: Սակայն նրանք և տառապել են և սովի մատնրվել: Այժմ վոչ մի կերպ չի կարելի անդրագետ յոլա գնալ: Մենք աշխատում ենք մեղ համար և վոչ աղաների: Ցանկանում ենք ամենաբարձր բերքն ստանալ, իսկ դրա համար պետք է սովորել:

Գրագիտությունը շահավետ գործ է և այն կարելի յէ ձեռք բերել, միայն ցանկություն և հարկավոր: Խորհրդային իշխանության պայմաններում կրթությունն ինքն է ժողովրդի ձեռն ընկենում: Փետությանը միջոցներ չի խնայում աշխատավորության ուսուցման համար: Նույն կոլտնտեսություն, վորի մասին վերը խոսեցինք, այժմ նստած սովորում է այն ամենը, ինչ իրեն հարկավոր է: Իսկ ձեր կոլտնտեսությունում ինչպես և աշխատում մեծահասակների գպրոցը: Ապա մի մտեք այդ գըտրոցը, ընկեր խմբագիր, և թերթում տեղեկություն տվեք նրա աշխատանքների մասին: Ի՞նչ և պակասում գպրոցին, ինչո՞վ պիտի ոգնել նրան: Թերթը լուսարձակի պես պետք է պայծառութեն լուսալորի կոլտնտեսության կյանքի բոլոր անկյունները:

Բայց գուցե ձեր կոլտնտեսությունում բոլորովին գպրոց ե՞լ չկա մեծահասակների համար: Այդ գեղքում պետք է բարձրացնել այդ խնդիրը և այնպես անել, վոր գպրոց բացվի: Իսկ դրան հասնել՝ թերթը կարող է միայն մեկ ձանապարհով—գրել, տեղիկացնել բոլորին, արթնացնել հասարակական կարծիքը: Այդ շատ զոր միջոց է:

Կուլտուրայի հարցերը ճշտորեն լուսաբանելու համար պետք է լավ ծանոթանալ, թե ինչ միջոցառումներ են նախազատրաստում տեղական կուսակցական կազմակերպությունը, կուսակցության շրջկոմն ու մարդկոմը։ Շատ կուսակցական կազմակերպություններ ձմբան կուլտուր-լուսավորական աշխատանքի մեծ պլան են մշակել։ Պետք ե վերցնել այդ պլանը և թերթի միջոցով ողնել նրա իրազործման այն կոլտնտեսությունում, վորտեղ լույս և տեսնում թերթը։

Որինակի համար մի քանի քաղվածք կրեռենք Համկ(ր)կ Մոսկվայի կոմիտեյի բյուրոյի վորոշումից՝ «1935-36 թվի ձըմեռային շրջանում գյուղում կուլտուր-լուսավորական աշխատանք կատարելու մասին»։ Այդ վորոշման մեջ նշված են հետևյալ միջոցառումները։

«1. Մինչև 1936 թվի գարունը Մոսկվայի մարզում վերացնել անդրադիտության մնացորդները կոլտնտեսականների միջից։

2. Մեծահասակների դպրոցները ներդրավել 300.000 կոլտնտեսական՝ մայրենի լեզու, մաթեմատիկա, աշխարհագրություն և բնագիտություն սովորելու համար։ Պետք Մոսկվայի մարզային բաժնին առաջարկել՝ մարզի կոլտնտեսականներին դասադրքեր ու գրենտական պիտույքներ մատակարարել։

100 Շրջանում կազմակերպել կոլտնտեսային խմբակներ՝ ոտար լեզուներ սովորելու համար։

3. Կրկնապատկել գյուղական գրադարանների մշտական բաժնորդ-ընթերցողների թիվը։ Դյուղական գրադարաններն իրենց աշխատանքը չպետք ե սահմանափակեն միայն մշտական ընթերցողների շրջանակով, այլ պետք ե կոլտընտեսականների ամենալայն մասսաներին ներդրավեն գեղարվեստական դրականության ընթերցանության մեջ, այնպես, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական առողջապահ մի քանի գիրք կարգ, որինակ՝ Գորկու «Մայրը», Ֆուրմանովի «Զապայելը», Շոլոխովի «Հերկած խոպան»-ը, Ռոտրովսկու «Ինչ պես եթ կոփում պողպատը», Նովիկով-Պրիբոյի «Յուստա»-ն, Ֆալեկի «Զարդը», Սերաֆիմովիչի «Յերկաթ» և աղաջանացքը», Ավետիքինի «Յարդը», Վահագուստի «Յարդը», Ստավրոս «Թափը» ևայլն։

4. Կիսագրագետների համար գեղարվեստական գրականության ընթերցանություն կազմակերպել մեծահասակների գպրոցներում, խրճիթ-ընթերցարաններում, կարմիր անկայուններում, հատուկ խմբակներում կոլտնտեսականների տանը։ Այդ աշխատանքների մեջ ներդրավել ուսուցիչներին, խրճիթ-ընթերցարանի ակտուլին, միջնակարգ դպրոցի բարձրը դասարանների աշակերտներին, կոմունիստներին ու կոմյերիտականներին։

Կազմակերպել 300 նոր կոլտնտեսային գրադարան։

5. Համաշխարհային ու ոռու կլասիկների ստեղծագործությունները կոլտնտեսական ընթերցողի մեջ լայնորեն տարածելու կապակցությամբ յուրաքանչյուր շրջանում առնը-վագն յերեք անգամ կոլտնտեսական ընթերցողների կոնֆերանս հրավիրել։

6. Խորհրդային գրողների ու կոլտնտեսականների ըստեղծագործական հանդիպում կաղմակերպել (յուրաքանչյուր շրջանում 2-3 անգամ) և այդ հանդիպումներն ողտազործել կոլտնտեսային գրական ակտիվ ստեղծելու համար։

Ուշագրամ ե 100 շրջանում ոտար լեզուներ սովորող կոլտընտեսականների խմբակներ կազմակերպելլ։ Այդ ցույց ե տալիս, թե կոլտնտեսական մասսայի կուլտուրական պահանջները վորքան արագ են աճում։ Կասկած չկա, մոր գյուղում արգեն շատ մարդիկ կան, վորոնք ցանկանում են ոտար լեզուներ սովորել։ Ստուգեցեք, թե չի՞ կարելի արդյոք ձեր կոլտնտեսությունում ես այդպիսի խմբակ կազմակերպել։

Համկ(ր)կ Մոսկվայի մարզային կոմիտեյի վորոշմամբ նախատեսվում ե ընթերցողների մի շաբաթ կոնֆերանսներ հրավիրել։ Այն, ինչ վոր մենք վերն ասացինք՝ գեղարվեստական գրականության պրոպագանիկ կապակցությամբ, կարող ե նախապատրաստական աշխատանք հանդիսանալ այլպիսի կոնֆերանսի համար։ Ընթերցողների մեջ հետաքրքրություն կառաջանա գեղի գրականությունը։ Նրանք կիմանան, թե ինչ պահանջել ընթերցողների կոնֆերանսում և իրենք ինչ պիտի առեն այդ կոնֆերանսում։

Ինչ վերաբերում ե խորհրդային գրողների ու կոլտնտեսականների ստեղծագործական հանդիպումը, ապա այդ կարելի մ



կազմակերպել վոչ միայն Մոսկվայի մարդի կոլտնտեսություններում, այլ և բոլոր մարզերում։ Պատի թերթը շատ լավ բան արած կլինի, յեթե իր վրա վերցնի այդպիսի հանդիպումների կազմակերպման նախաձեռնությունը։ Համարյա բոլոր քաղաքներում կան խորհրդային գրողների միության բաժանմունքներ։ Կարելի յե զնալ այնտեղ, մի կամ մի քանի դրողի հետ պայմանավորել, վոր դան կոլտնտեսություն։ Միայն, հանդիպումն այնպես պիտի կազմակերպել, վոր այն ոգուտ տա։ Հարկավոր ե դրա մասին նախորոք գրել թերթում, պարզել, թե ակտիվն ինչ ե ուղում ստանալ գրողների հետ հանդիպում ունենալուց։ Ավելի լավ ե առաջին հանդիպման նյութը դարձնել գրողի զրույցը կոլտնտեսության ակտիվի հետ՝ խորհրդային գրականության մասին։

Շատ կոլտնտեսություններում մարդիկ կան, վորոնք փորձեր են անում պատմվածքներ, վոտանավորներ գրել։ Հարկավոր ե այնպես անել, վոր գրողը կարդա տյղ սկսնակների ստեղծագործությունները և նրանց գործնական խորհրդներ տա, թե ինչպես պիտի գրել սովորել։

Մի անդամ կոլտնտեսություն յեկած գրողի հետ կարելի յե կապ պահպանել։ Կուլտուրայի ընազավառում նա կարող ե ոգնել և՛ կոլտնտեսությանը, և՛ գրող կոլտնտեսականներին։ Կուլտնտեսականների հավանության արժանացած պատմվածքներն ու վոտանավորները կարելի յե զետեղել պատի թերթում։

Խորհրդային յերկրում կոլտնտեսականի կուլտուրական մակարդակի բարձրացման համար շատ միջոցներ ու ձեւեր կան։ Հարկավոր ե միայն մտածել և գործի անցնել։

Ահա, որինակ, կուսակցության Մոսկվայի Կոմիտեյի վորոշմամբ նշած միջոցներից մեկը։

«Ճորտափիրական ժամանակների, կալվածատիրուկտն հողատիրության ըլջանի պատմությունը, ԽՍՀՄ-ում պրոլետարիան մեծ հեղափոխության պատմությունը, սոցիոլիտական շինարարության նվաճումներին, ինչպես և Խորհրդային Միության ու Մոսկվայի մարդի եկոնոմիկային և կուլտուրային կոլտնտեսականներին ծանոթացնելու համար եքակուրսիաներ կազմակերպել դեպի Մոսկվայի թանգարանները, պատկերասրահները՝ առնվազն 75 հազար կուլտնտեսականի մասնակցությամբ և Մոսկվայում ստեղծել

կոլտնտեսային եքակուրսիոն բազա։ Նույն հարցերի շուրջը յուրաքանչյուր ըլջանում կազմակերպել դասախոսություններ՝ ցուցադրելով նկարներ, կազմակերպել Փոտոցուցափեղկեր, ցուցահանդեսներ և գիտական կինո-Փիլմեր»։

Մի՞թե ամեն մի շրջանի կոլտնտեսություններում չի կարելի այս նույն բանն անել։ Իհարկե, կարելի յէ ։ Հին ժամանակ գյուղական բնակչության կուլտուրական մակարդակի ցածր լինելը պայմանավորվում եր նաև նրանով, վոր մարդիկ սահմանափակ տարածության վրա եյին ապրում և կարելի յե ասել, լույս աշխարհ չեյին տեսնում։ Յուրաքանչյուր հին գյուղում շատ ու շատ մարդիկ կային, վորոնք իրենց կյանքում յերկաթուղի չեյին աեսնում, հաճախ իրենց գյուղից բոլորովին դուրս չեյին գալիս։ Այժմ այդպիսի մարդիկ համարյա չկան։ Բազմաթիվ կոնֆերենցիաները, համագումարները, դասընթացները գյուղական բնակչությանը համարավորություն են տալիս հաճախակի լինել քաղաքներում և հաղորդակից լինել քաղաքի կուլտուրային։ Յեկան միայն մարզային քաղաքներն են գնում կոլտնտեսականները, այլ հաճախ նաև մայրաքաղաքն են գնում։ Հենց վերջին մի քանի ամսվա ընթացքում գյուղերից շատ մեծ թվով մարդիկ են գնացել Մոսկվա, զրույց ունեցել կուսակցության ու կառավարության ղեկավարների հետ, ընկեր Մտալինի հետ։

Իհարկե, դրանք կուլտնտեսային գյուղի առաջավոր մարդիկն եյին, վորոնք իրենց հիանալի աշխատանքով մեծ պատովի եյին հասել։ Սակայն մենք գիտենք, վոր կուլտնտեսություններում քիչ չեն հարվածայինները, վոր կուլտնտեսականների մեջ մեծ ցանկություն կա գեթ մի որով քաղաք զնալ և տեսնել, թե ինչ կա այնտեղ։ Պետք ե ընդառաջ զնալ այդ ցանկությանը։ Յեկամստեղ ել թերթը կարող ե նախաձեռնություն հանդես բերել։ Պետք ե թերթում տեղակորել, ասենք թե՝ խորհրդակցության համար քաղաք զնացած վորեկ կուլտնտեսականի պատմածը, թե ինչպես ե նա գործարաններն ու թանգարանները զնացել և ինչ ե տեսնել այնտեղ։ Իսկ հետո՝ հավաքել մի խումբ կուլտնտեսականներ, առաջին հերթին յերիտասարդներից, և եքակուրսիա կազմակերպել դեպի քաղաք։ Կարծում ենք, կուլտնտեսության վարչությունը կը նդառանացի դքան։ Գործին կլծվի կոմիտասական կազմակերպությունը և եքակուրսիան զլուխ կդա։ Յեթե քաղաքը հեռու չե և կոլտնտեսությունն ել բեռնատար ավտոմոբիլ

ունի, կարելի յե այդ ավտոմոբիլով գնալ։ Յեթե մոտիկ յերկաթուղի կա, ավելի լավ։ Կարելի յե քաղաք գնալ հանդստի որվանախորյակին և քաղաքում այցելել գործարանները, թանգարանները, լինել քաղաքի թատրոնում։ Կասկած չկա, վոր այդպիսի երսկուրսիան կուլտուրական լավ դործ կլինի։ Թերթի խնդիրը միայն հարցը բարձրացնելն է, հետաքրքրություն առաջացնելը, իսկ կազմակերպել և գործը գլուխ բերել կարող ե և վարչությունը և կոմյերիտական կազմակերպությունը։

Այսպիսի եքսկուրսիայից հետո լավ կլինի պատի թերթում անկետա տեղափորել այսպիսի ընդհանուր վերնագրով «Ի՞նչ տեսա յես քաղաքում» կամ՝ «Ինչ ինձ դուր յեկամ քաղաքում»։ Այսպիսի անկետան շատ հետաքրքիր բան կտա և նրանց, ովքեր եքսկուրսիայի չեն մասնակցել։ Գլխավորն այն է, վոր կնդարձակի մարդկանց մտահորիզոնը, կնդեայնի նրանց ճանաչողությունը կյանքի նկատմամբ։ ԶԵ՞ վոր կան մարդիկ, վորոնք կես դարձ շարունակ յերկաթե գութանով վար են արել, բայց չըդիմեն, թե այդ գութանով ինչպես ե պատրաստվում։ Եքսկուրսիան պետք ե ողտագործել նաև քաղաքական տեսակետից։ Որինակ՝ յեթե Հոկտեմբերյան շրջանի կուտնեսականներն եքսկուրսիա գնան Լենինականի տեքստիլ կոմբինատը վերադառնալուց հետո նրանք պետք ե թերթում պատմեն, թե բանվորներն ինչպես ելին իրենց մշակած բամբակից կտավ պատրաստում։ Կամ, յեթե Արարանի, Ախտայի և այլն, կոլտնտեսականներն եքսկուրսիա գան Յերևան և այցելեն հեղափոխության թանգարանը, նրանք վերադառնալով պատի թերթի միջոցով կարող են պատմել այնտեղ իրենց տեսածի և խմացածի մասին։

Այսպիսի նյութը կողնի կոլտնտեսականներին՝ բարձրացնելնաև իրենց քաղաքական գրագիտության մակարդակը։

ԿՈԼՏՆՏԵՍԱՎՅԻՆ ԱԿՈՒՄԲԸ

Դյուլում կոլտուրական—լուսավորական աշխատանքի ոջախը ակումբն է։ Արդեն կան կոլտնտեսություններ, վորոնք այնպիսի լավ ակումբներ ունեն, վոր այդ ակումբներն իրավացի կերպով կուլտուրայի պարագներ են կոչվում։ Սակայն այնիշատ են այն կոլտնտեսությունները, վորոնք ակումբ չունեն, կամ վորոնք ակումբի մեջ մասի վիճակը։ Նրա համար ել նախ կուտանքների մասին իրավարանների մասին, նրանց

խնդիրների մասին և թե կոլտնտեսային պատի թերթն ինչպես պետք ե լուսաբանի նրանց ինդիրները։

Խրճիթ-ընթերցարանն այլևս չի կարող լիովին բավարարել կոլտնտեսականների աճած կուլտուրական պահանջները։ Խրճիթ-ընթերցարանը ծնունդ ե առել այն ժամանակ, չերք գյուղում դեռևս անհաստական տնտեսություններն ելին գերազանցում։ Խրճիթ-ընթերցարանը մի կողմից գրադարաններ եր գործարինում, մյուս կողմից՝ ակումբներին։ Այն ժամանակ գյուղը գեռես քիչ թերթ ե ստանում, իսկ այդպիսի կոլտընտեսությունները քիչ չեն։ Ընդունենք, թե այդ կոլտնտեսությունը մի կանոնավոր գրադարան ու գրավաճառանոց ունի։ Ել ինչո՞ւ կոլտնտեսականը գգնաւ այդ հին տիպի խրճիթ-ընթերցարանը։ Թերթը կամ զիրքը նա տանն ել կարող ե կարգալ։ Իսկ ակումբը գնալ նա կցանկանա, քանի վոր այնտեղ և ներկայացում կտեսնի, և յերածություն կտի, վորտեղ զանազան խմբակներ կան, վորտեղ կարելի յե դասախոսություն լսել և այն։ Ահա թե ինչու այժմ կոլտնտեսականները ձգտում են ակումբներ կառուցել և այն ել լավ ակումբներ։ Սակայն, կրկնում ենք, առայժմ զեռ վո՞չ բոլոր կոլտնտեսություններում ակումբներ կան։ Նըշանակում ե, բոլոր միջոցները պիտի ձեռք առնել, վորպեսզի խրճիթ-ընթերցարաններն այնպես աշխատեն, վոր կարողանան ակումբներ կառուցվեն։

Այժմ մի նայեցեք ձեր խրճիթ-ընթերցարանին և տեսեք, թե ինչպես ե աշխատում։ Հավանական ե, վոր վատ և աշխատում։ Հավանորեն այնտեղ կեղտոտ ե, բոլորը ծխում են, իսկ յերք բաղմություն և հավաքլում, խիստ աղմուկ և լինում։ Ավելի հաճախ խրճիթ-ընթերցարաններ մասին, վորովհետեւ մեղ շատ հայտնի յե խրճիթ-ընթերցարանների մեծ մասի վիճակը։ Նշանակում ե, պորտ միջոցները պիտի ձեռք առնել, վորպեսզի խրճիթ-ընթերցարաններն այնպես աշխատեն, վոր կարողանան ակումբներ կառուցվեն։

Մենք այսպես վատահորեն ենք խոսում ձեր խրճիթ-ընթերցարանի մասին, վորովհետեւ մեղ շատ հայտնի յե խրճիթ-ընթերցարանների մեծ մասի վիճակը։ Նշանակում ե՝ պատի թերթի գորխարինել ակումբներին, մինչև վոր ինկական կոլտնտեսային

թըն ամենից առաջ պետք ե ձեռնամուխ լինի խրձիթ-ընթերցարանում կարդ հաստատելու: Այդ նշանակում ե՝ պետք ե մաքրություն ստեղծել խրձիթ-ընթերցարանում, վորպեսզի այդտեղ մտնելը հաճելի լինի, վորպեսզի մարդ գանալանա այնտեղ գնալ: Այնուհետև պետք ե պահանջել, վոր խրձիթ-ընթերցարանում խիստ կարգեր սահմանվեն: Դրա համար պետք ե գոյություն տևնենա խրձիթ-ընթերցարանի աշխատանքի ճշգրիտ ծրագիր—յերբ, վոր ժամերին կարելի յե այնտեղ ցածրածայն կարգալ, յերբ կոլեկտիվ ընթերցանություն կկազմակերպվի, յերբ զեկուցումներ կլինեն և այլն:

Այդպիսի ցուցակ-պլանը պետք է կախվի աչքի ընկնող տեղում, վորպեսզի բոլորն իմանան, թե յերբ՝ ինչ ե լինելու: Զգետք ե թույլ տալ, վոր խրձիթ-ընթերցարանն զբաղվի պարագմունքներով, ժողովներով և այլն: Դրա համար կարելի յե ուրիշ չենքեր ողովորձել:

Շատ կոլանտեսություններում դեռևս մարդկանց չեն վարժեցրել խրձիթ-ընթերցարան հաճախել: Դրա համար ել կարող ե պատահել, վոր սկզբնական ըրջանում, յերբ նույնիսկ կարդ ու կանոն ե հաստատված, հաճախորդներ չինեն: Դրա համար չպետք է վրդովվել: Կարգը խստորեն պետք ե պահպանել: Մարդիկ կլարժվեն և խրձիթ-ընթերցարանի աշխատանքը վիրկարավորվի: Յեթե, ասենք թե, այսոր ժամը 6-ին զրույց ե նշանակված, նշանակում ե ուղիղ ժամը 6-ին պետք է զրույցն սկսել, յեթե նույնիսկ մի 10 հոգի լինեն յեկած: Թե չե՝ մեզ մոտ արդեն սովորություն են դարձել ժողովը նշանակել ցերեկված ժամը 12-ին, բայց սկսել յերեկոյան 6-ին, դեռ լավ ե, յեթե 6-ին հավաքվեն և վոչ թե 9-ին: Ժամանակը հաշվի չառնելը, իզուր տեղը ժամեր կորցնելը անկուլտուրականության նշան ե: Այդ պատեսական ժամանակներից մնացած, ազատագործ ու հետամնաց աշխատանքի ըրջանից մնացած սովորություն ե և այդ սովորությանը վերջ պիտի տալ: Սովորել ժամանակը հաշվել վոչ թե ժամերով, այլ ըոսկեներով ու վայրկյաններով—ահա կուլտուրականության նշանը: Հավատացած յեղեք, վոր յեթե մի քանի անգամ զրույցը նիշտ ժամին սկսվի, բոլորը կմարժվեն ու ժամանակին կդան: Առանց դըրան խրձիթ-ընթերցարանի աշխատանքն, ինչպես հարկն ե, չե կարգավորվի:

Իհարկե, խրձիթ-ընթերցարանի աշխատանքն անմիջականորեն պիտի կարգավորի վոչ թե պատի թերթը, այլ գյուղիուրհուրհուրդը, տեղի կուսակցական ու կոմյերիուսական կազմակերպությունները, սակայն թերթը պարտավոր ե ոգնել դրան, թերթը պետք ե խմանա, թե ինչ բանի պիտի ձգտել: Խրձիթ-ընթերցարանի աշխատանքի բարելավման պայքարը կարելի յե այսպես սկսել. թերթում մի հոգված ե տեղավորում խրձիթ-ընթերցարանի աշխատանքի մասին, վորտեղ դրվում ե թե ինչն ե վաս և ինչպես պետք ե վերակառուցել այդ աշխատանքը: Հետո պետք ե տեղավորել խրձիթվարի հոգվածը հետեւյալ վերնագըրով «Ինչից ե գանդատվում մեր խրձիթվարը»: Հետո տեղավորել մի քանի առաջավոր կոլտնտեսականի թղթակցությունները՝ «Ինչ ենք ուղղում խրձիթ-ընթերցարանից» վերնագըրով: Ահա այդ թղթակցություններին ել պատասխան կտան կոլվարչության նախադաշը, դյուղիսորհոգի նախադաշը, կուսակազմակերպության քարտուղարը:

Սակայն ընդունենք, թե խրձիթ-ընթերցարանն սկսեց աշխատել ինչպես հարկն ե: Մաքրություն ստեղծեցին, կարդ ու կանոն սահմանեցին հաճախումներն ել լավ են: Ամեն ինչ լավ ե: Սակայն թերթի ինդիրը դրանով չի սպառվում, չենց այդտեղ ե, վոր սկսվում ե իսկական աշխատանքը:

Ի՞նչ ե կատարվում խրձիթ-ընթերցարանում, ի՞նչ ե նախատեսվում մոտակա ժամանակների համար, ի՞նչ պետք ե անել: Այս ամենի մասին պետք ե հաղորդել թերթում: Պետք ե տեղավորել կոլտնտեսականների թղթակցությունները՝ խրձիթ-ընթերցարանի աշխատանքի մասին կոնկրետ առաջարկություններով: Կարծ ասած՝ շարունակ հետաքրքրություն պիտի առաջացընել դեպի խրձիթ-ընթերցարանը և համարձակորեն քննադատել նրա աշխատանքը:

Խրձիթ-ընթերցարանում այնպիսի պայքաններ պիտի ստեղծել, վոր կոլտնտեսականներն իրենք պահանջ գդան այնտեղ զնաւու: Ասենք թե՝ մի վորեւ միջազգային կարևոր դեպք տեղի ունեցավ, կամ լույս տեսավ կառավարության վորեւ կարևոր վորոշումը: Կարող ե պատահել, վոր ինքը՝ կոլտնտեսականն ել կիարդա դրա մասին, սակայն այնպես պիտի անել, վոր կարգալուց հետաքրքրություն ունենալ կարգացածի մասին և կամ լույսը փոխանակություն ունենալ կարգացածի մասին:

բացուցիչ բացատրություններ ստանալ: Յեվ այդպիս ել կլինի յեթե կոլտնտեսականը վատահ լինի, մոր խրճիթ-ընթերցարանում արգեն զիտեն թերթում տաղմածի մասին և այնտեղ կա այնպիսի մարդ, վորը կարող ե բացատրություններ տալ:

Ել չենք ասում այն, վոր թերթ չկարդացած կոլտնտեսականը բոլոր կարևոր քաղաքական անցքերի մասին խրճիթ-ընթերցարանում պիտի տեղեկություն ստանա: Այդ ինքնին հասկանալի յէ:

Խրճիթ-ընթերցարանն իրոք կարող ե գյուղի կուլտուրական կյանքի ոջախն ու կենտրոնը գտնալ, յեթե, ինչպես հարկն և նրա աշխատանքին լծվեն կոլտնտեսության ու գյուղատնօրչողի զեկավարները, յեթե պատի թերթը բոլորի ուշադրությունը հրավիրի գեղի այդ կարեռագույն կուլտուրական հիմնարկությունը:

Բայց, ընդունենք, թե ձեր կոլտնտեսությունում վոչ թե խրճիթ-ընթերցարան ե, այլ մի լավ ակումբ: Ի՞նչպես ե աշխատում այդ ակումբը, կատարո՞ւմ ե իր վրա դրած ինդիքները: Ահա մի հարց, վոր իր առաջ պիտի դնի կոլտնտեսային պատի թերթը:

Վորոշ տեղեր ակումբներն իրենց սեփական պատի թերթերն են հրատարակում, վորտեղ և լուսաբանում են ակումբի ամբողջ աշխատանքը: Մենք այդ ճիշտ չենք համարում: Հարկավոր չե բազմաթիվ պատի թերթեր ստեղծել: Այդ ջատում ե ուժերը և թուլացնում թերթը: Բավական ե, վոր կոլտնտեսությունը մի ընդհանուր կոլտնտեսային թերթ ունի և լինեն բրիգադային թերթեր, վորոնք իրենց բրիգադային արտադրական խնդիրներն ունեն: Իհարկե, կոլտնտեսության, բոլոր կուլտուր-լուսավորական հարցերը պետք ե լուսաբանվեն ընդհանուր կոլտնտեսային պատի թերթում:

Բայց հենց այն փաստը, վոր վորոշ ակումբներում ծնունդ են առնում իրենց սեփական պատի թերթերը, հենց այդ ցույց և տալիս, թե ակումբի կյանքում վորքան չափ հարցեր կան, վորոնք թերթում լուսաբանելու կարիք են զգում: Վատ չի լինի ընդհանուր կոլտնտեսային թերթում մի մշտական բաժին ունենալ՝ նվիրված ակումբի աշխատանքներին:

Իհարկե, այսուղ չի հետեւմ, թե բրիգադային պատի թերթերը չպետք ե զբաղվեն իրենց բրիգադային կուլտուր-լու-

սավորական խնդիրներով: Անպայման պիտի զբաղվեն: Անդրագիտության դեմ պայքար պիտի մղել նաև բրիգադային թերթում, բրիգադային թերթն ավելի հեշտությամբ կարող ե յերեան հանել անդրագետներին, քանի վոր բրիգադայում բոլորն իրար լավ են ճանաչում: Այսուղ ավելի հեշտ ե նաև անդրագետներին գրագիտություն սովորեցնելը:

Յուրաքանչյուր բրիգադ ունի իր կարմիր անկյունը—բրիգադային ակումբի նման մի բան: Բրիգադային պատի թերթը պետք ե պայքարի, վոր այդ կարմիր անկյունը լավ աշխատի, վոր նա խկաղես բրիգադայի կուլտուրական ոջախը դառնա:

Սովորաբար կուլտնտեսային ակումբի աշխատանքը, ինչպես և նրա շենքը բաժանվում է յերկու մասի—դաշնական և խմբակային աշխատանքների մաս: Կան այնպիսի ակումբներ, վորոնց գահը լինի ամեն որ լիքն է ժողովրդով: Մի յերեկո դրամիստրակի ուժերով ներկայացնում է տրվում, մյուս յերեկոյան՝ կինոնկար և ցուցադրվում, յերբորդին՝ կուլտնտեսային յերգեցիկի խմբի և նվազախմբի համելոցն է լինում, չորսրորդին՝ չրջանակին ազգունումի, կամ քաղաքից յեկած գասախոսի գասախոսությունն է լավում և այսպիս շարունակ: Կամ ակումբներ ել, վորոնց գահը լինի շատ քիչ և զբաղված լինում, յերեմն՝ միայն հանգստի ուրեին: Այդ կախված է գյուղի մեծությունից, ակումբի և կուլտնտեսության մեջ յեղած կուլտուրական ուժերի քանակից: Յեթե ուժերը քիչ են, ավելի լավ և ներկայացնումներն ու յերեկոներն ուշ-ուշ կազմակերպել, միայն թե բովանդակալից լինեն: Սակայն, յուրաքանչյուր ակումբ պետք ե աշխատի անել այն առավելագույնը, վոր կարող ե անել և այդ բանին պետք ե հետեւի պատի թերթը: Թերթի հջերում պետք ե քննության առնել ակումբի աշխատանքը և քննադրական թերթությունները:

Ստորև մենք ավելի մանրամասն կիսունք խմբակային աշխատանքների մասին, իսկ այժմ՝ որինակի համար վերցնենք, թե ինչպես պետք ե լուսաբանել ակումբի աշխատանքը—ակումբի բեմում կատարված բեմադրությունները: Այդ բեմադրությունները միշտ ել կուլտնտեսականների կողմից մեծ ուշադրության են արժանանում: Մեզ հայտնի չե այնպիսի մի դեպք, յերբ ակումբում ներկայացնում լինի և հանդիսատեսները չհավաքվեն: Ինչ պիես ել վոր բեմադրվելիս լինի, Միշտ ել հանդիսատեսները լիքն են լինում, միկնույն ե, ներկայացնումը ձրի լինի, թե վը

Տարովիք: Ասկայն մեզ համար ամենաին ել միւնույն չե, թե ինչ պիես են բեմադրում: Շատ հաճախ ակումբների բեմերում անպետք պիեսներ են բեմադրում, դրա դեմ պետք ե պայքարել, թերթը պետք ե քննադատի այդպիսի պիեսները:

Մենք լավ գիտենք, վոր կոլտնտեսային թերթը հասուկ թատրոնական ուցենղենաներ և քննադատներ չունի: Յեվ այդ հարկավոր ել չե: Ամեն մի կոլտնտեսությունում, վորտեղ ակումք կա, կա նաև դպրոց, հաճախ միջնակարգ դպրոց: Կարելի յե պիեսի գնահատությունը հանձնարարել ուսուցչին, կարելի յե թերթում տեղապորել առաջափոր կոլտնտեսականների գնահատությունները: Յուրաքանչյուր գրադետ մարդ կարսղ ե շատ թե քիչ վորոշել՝ ակումբում լավ պիես ե բեմադրված, թե՞ վատ: Կարելի յե պիեսի գնահատականը թերթում տեղափորել նույնիսկ նրա բեմադրությունից առաջ: Կասկած չկա, վոր պիեսի քննադատությունը կհետաքրքրի կոլտնտեսականներին, քանի վոր նրանք այդքան հետաքրքրվում են ներկայացումներով, ապա ուրեմն ավելի ևս կհետաքրքրվեն բեմադրության համար նախատեսված պիեսներով:

Յեթե պիեսները թերթում քննադատվեն, ապա ներկայացման համար պիես ընտրող ընկերներն ստիպված կլինեն ավելի ուշադիր լինել դեպի այդ գործը, ավելի խնամքով ընտրություն կատարել և խուսափել խալտուրայից:

Սակայն վոչ միայն պիեսները պիտի քննադատել, այլ հենց բեմադրությունը, դերակատարների խաղը: Բոլորին հայտնի յեն կոլտնտեսային ակումբների բեմադրությունների գլխավոր թերությունները: Աչա դրանցից առաջինը՝ դերակատարները վատ են սովորում իրենց դերը և խաղի ժամանակ շարունակ հուշարձին են նայում: Իսկ հուշարձը դահլիճով մեկ գոռում ե, վորտեսղի իր ձայնը լսելի լինի, հակառակ դեմքում դերակատարը կսխարի: Ինչո՞ւ ուրեմն թերթում չխարազանել այդպիսի անփույթ դերակատարին: Այն ժամանակ նա ավելի լավ կսովորի իր դերը և ներկայացման վորակը կբարձրանատ:

Կոլտնտեսային ակումբների ներկայացումների յերկրորդ և շատ տարածված թերությունը հետեւյան ե. դերակատարները սիրում են խիստ ուժեղ գրիմ անել: Յենթադրենք թե վասիլ Պետրոսյանը առետրականի, կամ կուլակի դեր և կատարում: Նա աշխատում է այնպիսի ուժեղ գրիմ անել իր դեմքին, վոր-

պեողի վոչ մի կերպ չկարողանան ճանաչել իրեն, յերկար միթուք ե կացնում, գլխարկն աշեքրն ե զցում և կարծում ե, թե այդպիս ել պետք է: Հուզմունքից և չոքից դերակատարը չուտուի քրտնում ե, ինչպես ասում են՝ քրտինքը կարկուտի պես տեղում ե նրա վրայից, նա մոռանում ե իր գերը և ներկայացումը փչացնում: Թերթում պետք ե գրել ներկայացման այդ կարդիթերությունների մասին ևս, գրանով կզարդանա վոչ միայն դերակատարների, այլև հանդիսատեսների ճաշակը: Թերթն այդքանը կարող ե անել նույնիսկ առանց թատրոնական գործի մասնագետներ ունենալու:

Կասկած չկա, վոր այժմ ամեն մի կոլտնտեսությունում կդանվեն մի քանի մարդ, վորոնք յեղել են քաղաքի լավ թատրոններում և լավ գիտեն, թե ինչ բան ե խակական ներկայացումը: Հարկավոր ե նրանց մասնակից անել կոլտնտեսային ակումբի բեմադրությունների քննադատությանը: Հաճախ ազգրոնմը ներկա յե լինում կոլտնտեսային ներկայացումներին, տեսնում ե, վոր պիեսը վատ ե բեմադրվում, դերակատարները խաղում են անվատահ և վոչ այնպես, ինչպես հարկավոր ե, սակայն վոչ վոքադրումից խորհուրդ չի խնդրում, վոչ վոք նրան չի խնդրում թերթի համար մի փոքրիկ հոգված գրել ներկայացման մասին, նա ծիծաղում ե դերակատարների վրա, թափ տալիս իր ձեռքը, իսկ ներկայացումները շարունակում են վատ բեմադրվել: Աչա այսեղ ե, վոր կոլտնտեսային թերթը պետք ե ոգտագործի այդպիսի մարդկանց կուլտուրական փորձառությունը: Ագրոնոմը, ուսուցիչը կամ բժիշկը, առանց դրամիմբակի աշխատանքներին անմիջական մասնակցություն ունենալու, կարող են ոգնել նրան իրենց քննադատությամբ: Հարկավոր ե կոլտնտեսության լույր կուլտուրական ուժերն ոգտագործել մասսայի կուլտուրական զարգացման համար: Այժմ արդեն բավական չե, վոր կոլտնտեսային ակումբում ներկայացումներ են տրվում: Հարկավոր ե, վոր այդ ներկայացումները լավ, կուլտուրական լինեն: Թերթի խնդիրն ե հասնել այդ դրությանը:

Յեվ այսպիս, յեթե այսոր ձեր ակումբում ներկայացում և տրվում, վաղը ձեր թերթում կարծիքներ տպեցեք այդ ներկայացման մասին: Խնդրեցնք ուսուցչին, կամ ազգրոնմին՝ գրել բեմադրված պիեսի մասին, դերակատարների խաղի մասին: Ար-

Հագանքեցէք յուրաքանչյուր բեմադրմանը, քննարկեցէք, քննա-
դատեցէք և անպայման գործն առաջ կղնա:

Այժմ վերցնենք ակումբի աշխատանքի մի ուրիշ ձեր—կինոն:
Գաղտնիք չե, վոր մեզ մոտ գյուղերում կինոնկարները շատ
վատ են ցուցադրվում: Ժապավենը կարլում ե, լուսավորու-
թյունը վատ ե լինում, նկարի կաղըերն ելքանի վրա այնպես
են ստհում, վոր հաճախ հնարավոր չի լինում բան հասկանալ:

Ինչո՞ւ յե այդպես լինում: Դլխափորապես այդ գործի վրա
ուշադրություն չգարձնելու հետեւնքով, այն պատճառով, վոր
կինո-մեխանիկներն անփույթ են վերաբերվում դեսի իրենց պար-
տականությունները: Պատի թերթը կարո՞ղ ե վորեւ բանով ող-
նել: Այս, կարող ե: Յեթե կինո-մեխանիկը նախորոք խմանա,
վոր իր աշխատանքն այդ կոլտնտեսությունում քննադատելու
յեն, յեթե նա զիտենա, վոր կինոնկարի ցուցադրման նկատ-
մամբ անուշադիք վերաբերմունք չի լինելու, նա ստիպված կլի-
նի իրեն հավաքել: Լավ լուսավորություն ստեղծելը և նկարը
կանոնավոր ցուցադրելն այնքան ել դժվար գործ չե: Հարկավոր
և միայն մարդկանցից պահանջնել, վոր ուշադիք վերաբերմունք
ունենան դեսի իրենց պարտականությունները:

Կինո-մեխանիկից վոչ միայն պետք ե պահանջնել, այլև
պետք ե նրան ողնել, ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները,
վոր նա կարողանա լավ աշխատել: Հարկավոր ե թերթում տե-
ղավորել հենց կինո-մեխանիկի թղթակցությունը, թող նա ել
իր պահանջներն առաջադրի: Պետք ե այնպես անել, վոր կինո-
նկարի ցուցադրման բարելավման համար առաջադրված այդ պա-
հանջներն անպայման կատարվեն:

Նշանակում ե կինոնկարի ցուցադրման տեխնիկայի բարե-
լավումը հանդիսանում ե այն առաջնակարգ խնդիրը, վորի մա-
սին պատի թերթը պետք ե գրի: Դրա հետ միասին պետք ե գրել
նաև նկարների մասին: Պետք ե դիտողներին բացատրել նրանց
նշանակությունը, ողնել՝ ավելի հեշտ հասկանալու նկարը: Այդ
ես դժվար չե: Համարյա բոլոր նկարների մասին տպագիր թեր-
թերում ոեցենդիմաներ են տարլում, վորոնք կարող են ողնել Փիլ-
մը հասկանալուն, ուրեմն՝ և այն կոլտնտեսականներին պարզա-
րանելուն: Բացի այդ, ամենակարեւոր Փիլմերի մասին կարելի յե
լայն քննադատություն կազմակերպել՝ կոլտնտեսականների
մասնակցությամբ:

Այսպիսի քննադատությունները դիտողներին կողնեն աձել
կուլտուրապես, հետեւյալ անդամ նրանք ավելի ուշադիք կլինեն
և ուրիշ կերպ կդիտեն նկարը:

Այն, ինչ այստեղ ասվեց ներկայացումների ու կինո-նկար-
ների մասին, վերաբերում ե նաև ակումբում կաղմակերպվող
մյուս հանդեսներին: Պրանցից վոչ մեկը թերթն անուշադիք
չպետք ե թողնի: Նա պետք ե հետաքրքրվի այն ամենով, ինչ
տեղի յե ունենում ակումբում: Յեվ թերթը կարող ե ամեն ին-
չին հետեւել, յեթե ունենա իր ակտիվը: Յուրաքանչյուր ակում-
բում, յեթե նա վատ չի աշխատում, կա մարդկանց մի զգալի
խումբ, վորն ողնում ե նրա աշխատանքներին, շարունակ ակումբ
ե հաճախում, հոգ ե տանում նրա աշխատանքների լավացման
մասին: Այդ ակումբի ակտիվն ե: Այդ մարդիկ ամեն բանի գըլ-
իսավոր նախաձեռնովներն են, նրանք սիրում են ակումբը և մեծ
ուշադրություն են դարձնում նրա վրա: Ահա, պատի թերթն իր
կուլտուրական աշխատանքների մեջ հենց այդ ակտիվի վրա պի-
տի հենվի: Ակտիվիստները տեղյակ են ակումբի բոլոր գործե-
րին: Յեվ, յեթե նրանք հասկանան, վոր պատի թերթի միջոցով
կարելի յե բարելավել ակումբի աշխատանքը, ասկա այդ հար-
ցերում նրանցից ել լավ թղթակից գտնել չկ լինի: Նշանակում
ե՝ խնդիրն այն ե, վոր թերթն, ինչպես հարկն ե, պայքարի լծովի
ակումբի գերազանց աշխատանքի համար:

Նախքան ակմբային խմբակների աշխատանքներին անց-
նելը քննենք մի հարց ես, վոր կապ ունի ակումբի հետ, մի
հարց, վորով առանձնապես պետք ե զբաղվի պատի թերթը:
Խոսքը վերաբերում ե ռադիոյին:

Ռադիոն, մանավանդ գյուղում, մեր կուլտուրական աշ-
խատանքի ամենաթույլ բնագավառն ե: Նախ, մեր ռադիոցանցը
դեռևս շատ փոքր ե, թեև տարեց տարի ռադիոկետերի թիվն
ավելանում ե, սակայն այդ կետերը գեռ քիչ են, չեն բավա-
կանացնում: Յեթե գործը գնենք ինչպես հարկն ե, ապա կարող
ենք այնպես անել, վոր առաջիկա մի քանի տարվա ընթացքում
յուրաքանչյուր կոլտնտեսական իր տանը ուսդիունդունիչ ունե-
նա: Այդ մեր ռադիոյից վեր բան չե: Չենց այժմ իսկ յուրա-
քանչյուր կոլտնտեսություն ու յուրաքանչյուր գյուղաբուժություն
պետք ե աշխատի, վոր իրենց գյուղում, վորքան կարելի յե,
շատ ուսդիունդունիչներ լինեն: Պատի թերթի խմբագիրը պետք

Ե տեղեկանա , թե վորտեղ , ինչպես և ինչ գնով կարելի յե ռադիոլունիչներ ձեռք բերել և այդ մասին տեղեկացնի իր ընթերցողներին : Զի խանգարի մի հոդված ել տեղավորել ռադիոյի ոգուաների մասին , հետաքրքրել մարդկանց , վորակեսդի նրանք ցանկանան ամելի շատ ռադիոլունդունիչ ձեռք բերել :

Սակայն , ռադիո ցանցի ընդարձակմանը համելը գործի կեսն ե միայն : Իսկ ի՞նչպես ե աշխատում ռադիոն : Հաճախ ռադիո բարձրախոսները խոխոացնում են և շատ վատ են հաղորդում յերածություն ու մարդկային ձայնը , շատ քիչ և պատահում , վոր նրանք գյուղում լավ աշխատեն : Սրա գլխավոր պատճառն այն է , վոր գյուղում ռադիոսերնիկան խմացող մարդիկ քիչ կան : Յերբեմն մի չնչին ուղղում ե պահանջվում , վոր բարձրախոսը լավ հաղորդի : Սակայն վոչ վոք չի կարողանում այդ չնչին ուղղումը կատարել : Դյուզում ռադիոկուլտուրան դեռևս շատ ցածր է : Մինչեւ այն բարձրացնելն այնքան ել զժվար չե : Ռադիո ընդունիչը կարգի բերելու համար ինժեներ լինելու հարկ չկա : Բայլական ե ռադիոսերող լինել : Յեկ պատի թերթը պետք ե ամեն կերպ պրոպագանդ մղի ռադիոսերների թիվն ամելացնելու համար :

Այդ գործը ողիսի սկսել արգեն յեղած ռադիոսերողներից : Թող այդ թեկուղ մի մարդ լինի , հարկավոր և նրան քաշել թերթի աշխատանքի մեջ : Նա պետք ե հոդված գրի ռադիոյի մասին , պատմի , թե ինչպես կարելի յե ռւսումնասիրել թեկուղ տարրական ռադիո տեխնիկան : Յանկացողներ միշտ ել կլինեն : Ահա և ձեզ ռադիոս սիրողների խմբակ : Սակայն այդպիսի խմբակ ստեղծելուց հետո ել այն չպետք ե անուշադրության մատնել :

Հարկավոր ե տեղեկություն տալ , թե ի՞նչ ե անում այդ խմբակը , ի՞նչպես են սովորում նրա անդամները , ինչ ե արել խմբակը կոլտնտեսությունում ռադիոհաղորդման տեխնիկան բարելավելու համար և այլն :

Ռադիոն խոչըր գործ է : Ռադիոյի միջոցով ամենահեռավոր գյուղն ել կարող ե հեշտորեն տեղեկանալ , թե այսոր ի՞նչով ե ավրում ամբողջ յերկիրը : Դյուզում կարելի յե լսել ռուածնակարգություններին , գիտնականներին , լսել լավ դասախոսություններ , մի խոռոշով ռադիոյի նշանակությունն անդնահատելի յե : Հաղարակոր տարիների ընթացքում մարդիկ յերադել են առադ հաղորդակցության միջոցներ ստեղծել : Նրանք առասպել-

ներ են հնարել արագընթացների , աննկարագրելի արագությամբ վաղողների , այնպիսի ահեղ ձայն ունեցողների մասին , վորոնց ձայնը հարյուր կիլոմետրի վրա յե լսվում և այլն :

Տեխնիկայի զարգացումն առաջ անցավ բոլոր տեսակի , նույնիսկ ամենահամդուղն յերազանքներից ու առասպելներից : Մարդիկ յերազում եյին հարյուր կիլոմետրի վրա ձայնը լսվող հսկայի մասին և այդ հեքիաթ եր , իսկ այժմ ռադիոյի միջոցով մարդկային ձայնը կարելի յե լսել 10 հազար կիլոմետրի վրա և նույնիսկ ամելի հեռուց : Հանցաղործություն և տեխնիկայի այդպիսի նվաճումն անողազործելի թողնել : Հարկամոր ե բոլոր ուժերը գործադրել , վորպեսդի կոլտնտեսություններում ռադիոն յերգի , նվագի , խոսի մաքուր ու լսելի ձայնով :

Արդեն քիչ չեն նաև այնպիսի կոլտնտեսությունները , վորոնք ունեն իրենց սեփական ռադիո հանդույցը , ռադիո ստուդիան , և կոլտնտեսությունը վոչ միայն քաղաքների հաղորդումն ե լսում , այլև ինքն ե յերածություն ու զրույցներ հաղորդում : Այդպիսի դեպքերում կոլտնտեսային թերթն առանձնապես շատ ոլիսի զբաղվի ռադիոյով :

ՈՒՐԱԽ ՀԱՆԳՍՏԻ ՊԱՀԱՆՁԸ

Գյուղում կուլտուր-լուսավորական աշխատանքի կարեռապույն խնդիրներից մեկը արվեստի բազմակողմանի զարգացումն է—թարգումը, յերաժշտությունը, պարերը, խմբակային յերգերը և այլն։ «Կյանքն ավելի լավ է դարձել, ընկերներ։ Կյանքն ավելի ուրախ է դարձել», —ասաց ժողովրդի մեծ սուածնորդը ընկեր Ստալինը՝ ստախանովականների առաջին համամիութենական խորհրդակցությանը։ Այս կարծ արտահայտությունը մի ամբողջ դարաշրջան է բնորոշում։ Մենք վիթխարի հաջողությունների յենք հասել տնտեսական ճակատի բոլոր բնագավառներում։ Մենք չարունակում ենք առաջ շարժվել վիթխարի քայլերով։ Միաժամանակ արտադրեն աճում և ժողովրդի բարեկեցությունը։ Մեր ճանապարհի գլխավոր գժվարությունները հաղթահարված են արդեն։ Կյանքն ավելի յերջանիկ, ավելի ուրախ է դարձել։ Մենք մենք ցանկանում ե ուրախություն, խելացի ժամանց և կուլտուրական հանդիսությունների մարդ տեսնում է այդ և՛ քաղաքում, և՛ գյուղում։ Սակայն գործի եյությունը ավելի խոր հասկանալու համար համեմատեցեք հին գյուղի մենատնտես գյուղացուն ներկայիս կոլտնտեսականի հետ։ Իհարկե, նախ և առաջ կարեռն այն է, վոր լավ աշխատող կոլտնտեսականն զգալիորեն ավելի յեկամուտ և ստանում, քան ստանում եր մենատնտես միջակ գյուղացին, յերբեմն նույնիսկ ավելի, քան ստանում եր ունեոր գյուղացին։ Յեվ հասկանալի յե, վոր ով ավելի շատ յեկամուտ և ստանում, նրա կյանքն ավելի ուրախ և անցնում։ Հատ վորում, շատ յեկամուտ ստանում են վոչ թե մեկ հոգի, այլ բոլորը, ովքեր աղնավորեն են աշխատում։ Սակայն միայն այս չե ամբողջ խնդիրը։ Վեցնենք նախկին, նույնիսկ մեծ յեկամուտ ստացող մենատնտես գյուղացուն։ Ասենք թե բերքը հարավի յեղել, ձին չի սատկել, կովը միանդամից յերկու հորթ և ծնել, հրդեհ չի պատահել, բոլոր պարտիկանը մասնակի առաջարկության տալով։

Վճարված են, մի խոսքով, ինչպես ասում են, ամեն ինչ յուղի պես և գնում։ Սակայն միթե այդպիսի գյուղացին կարող էր ուրախանալ։ Վատա՞հ նա վաղվա որվա համար։ Այդպիսի վստահություն նա չուներ։ այս տարի լավ բերք է յեղել, իսկ ի՞նչ կլինի յեկող տարի։ Զին չի սատկել, բայց նա կարող և սատկել։ Կրակից ել գեռ կարող է գժբախտություն հասնել։ Հին թուսառանում տարի հաղարավոր գյուղեր եյին վառվում։ Մի խոսքով, վոր կողմն ել նայե՞ տիպուր հեռանկար էր։ Մեկ այս, մեկ այն կողմից գժբախտություն եր սպասվում։ Մանր գյուղացիական տնտեսությունը հետամնաց եր ու անկայուն։ Գյուղացուն հաղարավոր ծանր վշտեր եյին բաժին ընկնում։ Վաղվա որվա նկատմամբ վստահություն չկար և չեր ել կարող լինել նույնիսկ ուժեղ տնտեսություն ունեցող գյուղացու համար։ Յերկուսից մեկը—կամ նա իմքն ել պիտի աշխարհական կուլակ դառնար, վորպիսի հույսեր շատ քիչ կային, կամ թե իրեն պիտի ճնշեր կուլակը և տնտեսությունը պիտի քայլարիկը թեև գանդադար, սակայն հաստատորեն։ Այդպիսի կյանքում ել ի՞նչ ուրախություն կարող եր լինել։ Ահա թե ինչու գյուղում հասակագոր մարդիկ հաճախ մոռյը եյին լինում, թատրոնը, կինոն, արքեստը համարում եյին անարժեք գրադմունք և «ուրախանում եյին» միայն իրենց հարբեցողության տալով։

Այժմ վերցրեք կոլտնտեսականին։ Նա այս տարի լավ բերք և ստացել համատացած է, վոր յեկող տարի ավելի մեծ յեկամուտ և ունենալու։ Բավական է միայն ազնվորեն աշխատել և կոլտնտեսականը տարեց—տարի ավելի ունեոր կղատնա։ Այն յեկամումը, վոր ստանում է իր աշխարերի դիմաց, ծախսվում է միայն իր անձնական կարիքների համար։ Սերմացուն, անասունները, մեքենաները և բոլոր անհրաժեշտ բաները կամ կոլտնտեսությունում։ Դրանք ձեռք են բերվել կոլտնտեսականի ազնիվ աշխատանքով, իր աշխարերի դիմաց ստացածից դուրս։ Վոչ մի լծից վախենարու հարկ չունի կոլտնտեսականը։ Նա հրճանքով ու վստահ և նայում ապագային։ Հարստանում ու ամրանում է նրա հայրենիքը, նրա կոլտնտեսությունը, շարունակ բարելավվում է նրա կյանքը։ Ահա թե վորտեղից և աճում հրճանքն ու ուրախությունը գյուղում։ Այս հիման վրա, ապատագրված ստեղծագործ աշխատանքի և մասսաների բարեկեցության հիման վրա յե աճում ուրախությունն ու հրճանքը նաև քաղաքում։



Աւրախ հանդստի, չըճվալից բարձրականության այդ պահանջը սլեռը և բավարարվի: Յեկ գյուղում աճում են այդ պահանջը բավարարելուն ընդունակ ուժել:

Տեսէք, թե ինչ են դատնում կոլտնտեսային յերաժշտայինքը: Դեռևս մի քանի տարի առաջ շատ քիչ կոլտնտեսություններում յերաժշտայինքը կային, իսկ այժմ նրանց թիվը հազարների, տասնյակ հազարների յէ հասնում:

Հավամուրեն շուտով շի լինի այլնս շատ թե քիչ խոչոր մի կոլտնտեսություն, վոր չունենա իր յերաժտախումբը: Իսկ մի քանի կոլտնտեսություններ արգեն զույգ զույզ յերաժտախումբ ունեն—մեկը՝ գորդային, մյուսը՝ լարային: Բայց վորտեղից զունդեցին նվազողները: Յեկ այն ել ի՞նչ նվազողներ—նվազում են վոչ միայն պարի ու քայլերդի յեղանակներ, այլ և կլասիկ յերաժշտություն: Ենթագենի, Զայլկովսկու, Գլինիկի ստեղծագործությունները: Քիչ չե պատահում, վոր յուրաքանչյուր դործիքի վրա յերկու — յերեք նվազող ել լինում:

Կամ, վերցրեք իմբարկան յերգը: Վոր կոլտնտեսությունը չունի իր յերգեցիկ խումբը: Կարծես զետնի տակից հանկարծ տապանդներ բռւսան: Սքանչելի ձայն ունեցողներ յերեան յեկան: Վերջերս արվեստի վաստակավոր գործից Մոոկվայի մեծ թատրոնի արտիստ Ա. Պետովակը զնաց կոլտնտեսություն՝ կոլտնտեսավան յերգիչներին լսելու: Յեկ մի կոլտնտեսությունում նա յերկու տապանդավոր յերգիչ դաշտվէ: Նա ուղղակի հիացել եր նրանց յերգից:

Ժողովրդի մեջ միշտ ել տաղանդներ յեղել են ու կան: Սակայն նրանց զարգացման համար պայմաններ չեն յեղել: Իսկ այժմ այդ պայմանները կան: Յեկ հանդես են գալիս տաղանդները: Մենք զիտենք կոլտնտեսություններ, վորոնք յերեք յերգեցիկ խումբ ունեն—մեծների խումբ, յերեխանների խումբ: Իսկ հետո ծերանիներն ել յերիտասարդներին նայելով՝ կազմակերպեցին իրենց խումբը միայն ծերունիներից: Նշանակում ե իրոք կյանքն ուրախ և դարձել բոլորի համար, յեթե ծերունիներն ել են սկսել յերգել:

Մենք արդեն ասացինք, վոր առաջ գյուղում արհամարհանգույն կերպ կուտառերան, մինչդեռ զիտի կուլտուրան, մինչդեռ զիտի կուլտուրան հակումն ունեցող մարդիկ միշտ ել յեղել են: Ամեն մի գյուղում յեղել ե զեթ մի մարդ, վոր կարողացել եր սազ նվա-

դել, կամ շիփ փչել, գանաղան յերգեր յերգել: Այլպիսի մարդիկ դժուղելիքում իսենթ են համարվել, նրանց վոչ վոք լուրջ մարդու տեղ չի գրել: Բայց ահա, փոխվել ե կյանքը և մարդիկ սկսել են այլ կերպ նայել արվեստին, յերգին ու յերաժշտությանը: Հանգես են յեկել նվազախմբեր, նույնիսկ պարախմբեր և այն նույն մարդիկ վորոնք առաջ իրենց արտիստական ննդունակությունների գործադրության տեղ չեյին դտնում, այժմ հնարավորություն են ստացել բարձակողմանիորեն զարգացնելու այն: Նա, վոր առաջ միայն շիփ յեր նվագում, այժմ հնարավորություն ունի գաշնամուր նվազելու և կարողանում է հանդես բերել իր տաղանդը: Նա, վոր առաջ աքլորի նման կանչել զիտեր, այժմ լիս հնչյուն նվազախմբը և կազմակերպում: Իսկ նա, վոր սազ նվազել եր սովորում, այժմ նոտաներ և սովորել, սկսել և լրջորեն զբաղվել յերաժշտությամբ և կոլտնտեսության լարային նվազախմբի դերիցյորն և դարձել:

Այլպես ե կյանքը փոխում մարդկանց, իսկ մարդիկ այլիլի բախցնում, ավելի գեղեցկացնում, ավելի ուրախ են զարձնում կյանքը:

Զտեսնված, չուված թափով և ծաղկում ինքնապործ արվեստը կորոնահասային դրույտը:

Ճարքային կոլտնտեսականները, վորոնք վարժվել են հերկել, ցանել, աշխատել տրակտորի վրա, ինամել անասունները, այժմ հիանալի հաջողություններ են ունենում նկարչության, յերաժշտության, թատերական արվեստի մեջ: Յեթե այդ մարդիկանց ողնություն ցույց տրվի, նրանք կարող են զգալի չափով բավարարել կոլտնտեսականների աճող պահանջներն արվեստի և կուլտուրական բավականության խնդրում: Կան կոլտնտեսային խմբեր կամ նվազախմբեր, վորոնք հենց հիմա և վատ չեն յերգում կամ նվազում պրաֆեսիոնալ յերաժիշտներից կամ յերգիչներից բազկացած խմբերից:

Պատի թերթն ինչպես պիտի ձեռնամուխ լինի ինքնապործ արվեստին, վորպեսդի ողնի նրան աճել ու զարգանալ: Նախ քան այդ հարցին պատասխանելը մի հատված ել բերենք Մոոկվայի կոմիտեյի վորոհիշյալ վորոշումից:

«Հանդիսատեսական ձեռնարկությունների վարչություններին պարտավորեցնել ըրջիկ թատրոնների և Մոո-

կվայի արտիստների ուժեղով մարզի կոլտնտեսություններում կաղմակերպել 1000 ներկայացում ու համերգ սպասարկելով 300 հաղար հանդիսատեսի և ապահովել առնվազը 75 հաղար կոլտնտեսականների հաճախումը մարզի ստացիոնար թատրոնների ներկայացումներին (Տուլա, Կարուդա, Ռյազան և այլն) :

Հանձնարարել Մոսկվայի լուսաժնին՝ յերեան բերել է ուղղութեային գեղարվեստական ինքնագործունեցությունը և նրանցից բոլոր շրջաններաւմ կաղմակերպել մշտապես դործող խմբեր :

3000 յերգեցիկ խումբ,
4000 թատերական խումբ,
500 հավաքական լարային նվազախումբ,
131 շրջանային փողային նվազախումբ,
100 խումբ կոլտնտեսականներից՝ դաշնամուր սովորելու համար,

131 շրջանային կերպարվեստի խմբակ,
30 կոլտնտեսային տիկնիկային թատրոն։
Առաջարկել կուլտուրաժնին՝ կուլտ-չեֆության կարգով Մոսկվայի ու մարզի յուրաքանչյուր թատրոնին և թատերական—յերաժշտական ուսումնական հաստատությանը կցել վորոշ թվով յերգեցիկ խմբեր ու դրամ ։ խմբեր՝ սիստեմատիկաբար գեղարվեստական—մեթոդական ղեկավարություն ցույց տալու համար։

Յերաժշտական սուայել մեծ չնորհք ունեցող կոլտնտեսականների համար վիճելի շրջանում ստեղծել յերաժշտական դպրոց։

Պարտավորեցնել լուսաժնին և կոլտնտեսականների ինքնագործ արվեստի Տանը՝ այդ յերգեցիկ խմբերը, յերաժշտականներն ու խմբակներն ապահովել մեթոդական ցուցումներով, հատուկ ուշադրություն դարձնելով գեղարվեստական բարձրարժեք ժողովրդական ու կլասիկ ուղղությունները ստեղծելու և ժողովրդական ստեղծագործության բարձրություն նմուշները յերևան բերելու վրա։

Զմեռվա ընթացքում կաղմակերպել կոլտնտեսային գեղարվեստական ինքնագործունեցության 50.000 յերեկո

(յուրաքանչյուր կոլտնտեսաւթյունում առնվազն 3), լայնութեան կիրառելով լավագույն բեմադրությունների փոխանակման փորձը։

Փորձի փոխանակման նպատակով Արհմիությունների Մոսկվայի մարզային խորհրդին հանձնարարել՝ մարզի կոլտնտեսություններում կաղմակերպել բանվորական գեղարվեստական ինքնագործ խմբակների 300 յերեկո։

Մոսկվայի լուսարձնին առաջարկել՝ թատերական խըմբակներին ողնելու համար 30 շրջանային կետերում կաղմակերպել դեկորացիաների, թատերական զգեստների, պարիկների և այլ պիտույքների վարձակայաններ։

Կոլտնտեսային ինքնագործ արվեստի Տան կից կաղմակերպել մշտական կարճատև դասընթացներ, բարձրացնելու համար թատերական խմբակների, յերգեցիկ խմբերի ու յերաժշտական խմբերի ղեկավարների վորակը։ Կարճատև դասընթացներ կաղմակերպել նաև սուայել չորրության կատարողների համար։

Կոլտնտեսական լայն ժառանակներին խորհրդային արվեստի լավագույն վարպետների ստեղծագործությանը ծանոթացնելու համար մարզի յուրաքանչյուր շրջանում կաղմակերպել մեկ-յերեկու ստեղծագործական կոնֆերանս-հանդիպում կոլտնտեսականների և թատրոնի, յերաժշտության, նկարչության, քանդակագործության և այլ արվեստների ականավոր վարպետների մասնակցությամբ։

Ահա թե կուսակցության Մոսկվայի կոմիտեն ինչպես լայն գնում ինքնագործ արվեստի հարցը։ Նույնպիսի լայնությամբ ու լրջությամբ պիտի զնել այդ հարցը նաև յուրաքանչյուր կոլտնտեսությունում։

Ամենից առաջ դիտեցեք, թե ինչ են անում ձեր ակումբի խրմակները։ Արդյոք նրանք բոլոր ընդունակներին հնարակվորություն, տալիս են յերգելու, նվազելու, պարելու, իրենց ընդունակությունները յերեան բերելու։ Յեթե զործ վատ ե զրկած, պետք է խիստ քննադատել խմբակների աշխատանքը։

Յուրաքանչյուր յերեկույթի մասին թերթում հողմած տեղային բերեցեք, տպեցեք կոլտնտեսականների կարծիքները, հորցը բ

այդ գործին լավ տեղյակ մարդկանց, մի թույլ տաք, վոր խըմ-
բակները հանգստանան իրենց նվաճումներով:

Նույնպիսի ուշադրությամբ պիտի վերաբերվել ինքնազործ
արվեստի հաջողություններին: Շատ լավ կլինի, յեթե թերթը
դնահատական տա տաղանդավոր յերգչի կամ նվագողի աշխա-
տանքին: Յեկ յերգչին ու նվագողին դուր կդա, վոր իրենց գո-
վել են թերթում և գրանից հետո ավելի ջանասիրաբար կաշխա-
տեն և այդ կոլտնտեսականներին կոգնի հասկանալ նրա նվագը
կամ յերգը: Նրանք ավելի լավ կդնահատեն այդ արվեստը: Բնդ
հանրապես կոլտնտեսությունը հոգատարությամբ պիտի ըրջա-
պատի իր մեջ յեղած կոլտնտեսական չնորհալի արտիստներին:
Այդ մարդկանց պետք ե զնահատել: Նրանք մեծ հարգանքի յեն
արժանի: Թերթը պետք ե բոլորին ոգնի այդ հասկանալ: Վոր-
քան ավելի լավ պայմաններ ստեղծենք ինքնազործ արվեստի հա-
մար, այնքան ավելի արագ կաճի ու կզարդանա այն:

Իհարկե, շատ բան և կախված խմբակների ղեկավարներից:
Կան կոլտնտեսություններ, վորոնք հատուկ վարձատրությամբ
դիրիժորներ և նույնիսկ սեփականներ են հրամիրել քաղաքից:
Բոլոր կոլտնտեսությունների ուժը չի պատի այդ անել: Դրա հա-
մար եւ շատ կոլտնտեսություններում գործին տեղյակ ղեկավար-
ները պահապում են: Սակայն ղեկավարներ առաջ են զալիս հենց
խմբակների անդամների շարքերից և այդ արվեստի կադրերի ան-
ման ամենապատահելի աղբյուրն ե: Յերկրորդ՝ ողնություն պի-
տի ստանալ նաև քաղաքից: Այդ նպատակով ե, վոր Համ. կ.
(բ) կ. Մոռկվայի կոմիտեն իր վորոշման մեջ նախատեսում և
պրոֆեսիոնալ արվեստագետների ու կոլտնտեսական խմբակների
հանդիպումներ: Դրա համար յուրաքանչյուր ըրջանում մեկ—
յերկու կոնֆերանս պիտի հրամիրի: Այդպիսի հանդիպումներ
կարելի յե կազմակերպել նաև ուրիշ մարզերում ու յերկրամասե-
րում: Բացի այդ պատի թերթը թատերական խմբակին կարող և
ողնել անմիջապես կապվելու քաղաքի թատրոնի հետ և թատրոնի
շեփությունը՝ զամ-խմբակի վրա, կարգավորել:

Գլխավորն այստեղ նախաձեռնությունն ե, դործն սկսելը,
մտքեր տալը և մարզկանց գործի մեջ քաշելը: Հաղիվ թե զտնիի
մի թատրոն, վորը հրաժարվի ողնություն ցույց տալ իրեն դի-
մող թատերական խմբակին:

Վերցնենք մի որինակ ևս, թե թերթն ինչ կարող և անել
ինքնազործ արվեստին ողներու բնագավառում: Գյուղերում մեծ
հաջողություն և գտնում տիկնիկային թատրոնը: Իսկ այդ կաղ-
մակերպելը մեծ գժվարության հետ չի կապված: Յեթե թերթն
իմանա, թե հարեան կոլտնտեսություններում կամ ըջանային
կննարանում տիկնիկային թատրոն կա, կարող և հարց բարձրաց-
նել, վոր մարդիկ ուղարկվեն այնտեղ, վորոնք կարձ ժամանա-
կում կուլորեն և իրենց մոտ ել կկաղմակերպեն արդպիսի թատ-
րոն: Այդ մեծ հարմարություններ ու շնչեր չի պահանջում, իսկ
տիկնիկները կարող են չինել հենց ակումբի ակտիվ անդամները:
Իսկ տիկնիկները խաղացնել կարելի յե սովորել մի քանի որքա
մեջ: Հայվանորեն կոլտնտեսությունում կլինեն և այսպիսի մար-
դիկ, վորոնք տիկնիկային թատրոնի համար պիյես կդրեն կոլ-
տնտեսության կյանքից: Այդ ինչպես հարկն և ձիդ կատա լող-
րերին ու կիարազանի կոլտնտեսության թերությունները:

Գուցե հենց ձեր կոլտնտեսությունում կա այնպիսի մարդ,
վորը դիտե տիկնիկային թատրոնի գործը: Կարելի յե նրան հանձ
նարաբեկ, վոր մի հոգիած գրի թերթի համար: Այդպիսով ել
դործն ստաջ կշարժիլ:

Մենք, ի հարկե, չնչին չափով անգամ չթվեցինք այն դերն
ու նշանակությունը, վոր ունի ինքնազործ արվեստը: Մենք ցան-
կացանք միայն պատի թերթերի ուշադրությունը հրամիրել այդ
խնդիրների վրա, վորպեսզի նրանք յլջորեն զբաղվեն գրանցով
և նույնը պահանջեն կոլտնտեսությունների ղեկավարներից: Գյու
ղում կուլտուր-լուսավորական աշխատանքի բարձրիչ մասն և
կազմում կոլտնտեսականների հանդստի կազմակերպումը: Այդ
վոչ թե ժամանց ե, այլ կարենրազույն աշխատանք:

Կոլտնտեսականների կուլտուրական դարձացման կարենը
հարցերի շարքին են պատկանում նաև ֆիզիկուլտուրան, սպորտը:
Անցյալում, Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ գյուղում
Փիդկուլտուրայի մատին զաղափար չունեցին, այդ ևս անիմաստ
զբաղմունք եր համարվում: Այժմ կոլտնտեսություններում Փիդ-
կուլտուրա և սպորտ կա, սակայն հարկավոր ե ամեն կերպ զար-

գացնել այդ դործը : Յուբաքանչուր կոլտնտեսությունում ֆիզ-
կուլտ-իոմբակ պիտի լինի : Դժվար չե զորացրված կարմիր բանա-
կայինների մեջ ամեն մի խմբակի համար զեկալար դտնել, դժ-
վար չե ճնոք բերել նաև անհրաժեշտ ինվենտարը, կազմակերպել
սպորտ-հրապարակ : Շատ կոլտնտեսություններ արդեն իսկական
ստադիոններ են կառուցում, իսկ սպորտ-հրապարակ կարելի յէ
պատրաստել ամեն մի կոլտնտեսությունում :

Այստեղ հարկ չկա ասելու, թե ինչպես և ինչու պիտի զբաղ-
վել սպորտով : Շատ արժեքալոր գրքեր ու բրոցյուրներ կան թե
ամբողջապես Փիզիկուլտուրայի և թե նրա առանձին ձևերի մասին :
Այստեղ մենք միայն հիշեցնում ենք, վոր թերթը պետք է գրի
Փիզիկուլտուրայի մասին և պետք է ողնի այն արմատացնելու
կոլտնտեսականների մեջ :

ԿԵՆՑԱՂԻ ՀԱՐՑԵՐ

Կոլտնտեսային պատի թերթերի խմբագրական կոլեգիաների
ու շալորությունը պետք է հրամիրել նաև այն կուլտուրական
հարցերի վրա, վորոնք կապված են մարդկանց կենցաղի հետ :
Սկսենք կոլտնտեսային դյուղի արտաքին տեսքից :

Կոլտնտեսականների ընդհանուր կուլտուրականության բարձ-
րացումն անհամատեղելի յէ կեղափ, խավարի ու անբարեկարդ
դյուղի մեջ ապրելու հին սովորության հետ : Յեկ մենք տեսնում
ենք, թե կոլտնտեսականների կուլտուրականության աճման հետ
միասին ինչպես և աճում նաև դյուղը գեղեցկացնելու, բարե-
կարգելու ձգումը :

Մեր գյուղի արտաքին տեսքն եկ արդեն հին գյուղից տար-
բերվում ե այն բանով, վոր կոլտնտեսություններում բարձրացել
են նոր, խոշոր շենքեր, վորպիսիք առաջ գյուղը յերթեք չեր տե-
սել . դրանք են՝ կոլտնտեսային խոշոր գոմերը, պահեստները,
սիլոսի աշտարակները, արհեստանոցները, խոշոր դպրոցները և
այլն : Գյուղում ավելի ու ավելի հաճախ կարելի յէ հանդիպել
ենկարոկայանների, խոշոր ակումբների : Սակայն գյուղում դեռ
շատ կա նաև կեղափ, արտաքին անբարեկարգություն : Կոլտնտե-
սականներն, ինչպես հարկն ե, պետք ե լծվեն այդ դործին, վո-
րովհետև, առանց մարդկային աշխատանքի, ինքն իրեն վոչինչ
չի լինի :

Կարծում ենք դժվար գործ չե փողոցները ծառագարդելը,
փոսերը լցնելը, հարթելը, վորպիսղի լճակներ ու դարուփոսեր
չլինեն : Պատի թերթը գյուղին կուլտուրական տեսք տալու դործի
յեռանդուն ագխտառորը պիտի գտանա : Խոսքը վերաբերում է վոչ
միայն փողոցներին, այլ և կոլտնտեսականների տներին : Պատի
թերթի եջերում պետք ե հիշատակել այն կոլտնտեսականների
անունները, վորոնք չեն սպիտակացրել իրենց խրճիթները, չեն
նորոգել տանիքը, կարգի չեն բերել ցանկապատը : Ժամանակն և
այդպիսի մարդկանց ծույլ հայտարարել և քննագարել նրանց :
Յեկ իրոք, ո՞վ ե խանգարում կոլտնտեսականին՝ կարգի բերել

իր բակը, իր խրճիթը: Վոչ վոք և վոչ մի բան չի խանդարում: Սյու կարելի յեւ և պետք ե արմի:

Թերթում պետք ե արծարծել նաև ավելի խոշոր ու լուրջ խնդիրներ: Որինակ՝ մեր գյուղերում տների մեծ մասը ծածկված էն խոտով, հողով: Այդ անկուրուրականության, հետամնացության մնացորդ ե: Այդպիսի տանիքները վոչ միայն փշացնում են գյուղի տեսքը, այլ և վտանգավոր են հրդեհի տեսակետից, կամ թե հաճախ կաթում են: Առաջ գյուղում չքավորության պատճառով եյն իրենց տունը հողով կամ խոտով ծածկում: Թուսաստանի կենտրոնական մասերում նույնիսկ այսպիսի մի սովորություն կար. գյուղացին աշնանը տունը ծածկում եր խոտով, իսկ յերբ գարնանը կերը պակասում եր, տանիքի խոտը ցած եր բնում և նրանով կերակրում անսառները, իսկ աշնանը նորից եր ծածկում: Այսպիսով տանիքը մի տեսակ «կերի բազա» յեր դատնում գյուղացու համար:

Ժամանակն ել լրջորեն զնել կղմինդրի հարցը: Կղմինդրը շատ դիմացկուն, հրակայուն, եժան և գեղեցիկ նյութ ե տանիքները ծածկելու համար: Կղմինդր պատրաստելն ել մի գժվար գործ չե: Յեթե մոտակայքում համապատասխան հող կա, մեկ-յերկու տարվա ընթացքում կոլտնտեսությունը կարող ե այնքան կրումինդր պատրաստել, վոր գյուղի բոլոր տները ծածկելուն կրավակնացնի: Մոսկվայի մարզում հենց այդպես ել վորոշել են-մոտակա յերկու-յերեք տարվա ընթացքում կոլտնտեսություններում բոլոր տները ծածկել կղմինդրով:

Կոլտնտեսային պատի թերթերը պետք ե ձեռնամուխ լինեն այդ գործին: Հարց ու փորձ անել կառուցողներին, տեխնիկին և բոլոր կոլտնտեսականներին հետաքրքրել այդ խնդրով: Յեշ այն ել այնպես հետաքրքրել, վոր նրանք հանդիսաւ չտան կոլտարչությանը: Վո՞ր կոլտնտեսականը չի դերակասում կղմինդրածածկ տունը հողով ծածկածից:

Թերթը գյուղի արտաքին տեսքի մասին թղթակցություններ տալով չպիտի սահմանափակվի: Հարկավոր ե նայել նաև տների ներսը: Մի տեսնել, թե մարդիկ ինչպես են ապրում: Իսկ քիչ չեն այնպիսիները, վորոնք դեռ կեղտուան ապրում: Զցրվելու և «թնդանոթը ճնճղուկի վրա չարձակելու» համար հարկավոր ե մեկ-յերկու կարեւոր հարց վերցնել և լծվել նրանց լուծմանը: Ու-

րինակ՝ միջամտների հարցը: Դեռ շատ տներում միջամտներ կան: Պետք ե կամպանիա սկսել դրանց դեմ, վորպեսզի գյուղը մաքրվի միջամտից: Վատահ յեղեք, վոր միջամտի հարցն իր հետեւց ել նոր հարցեր առաջ կբերի: Առանց խրճիթում ընդհանուր մաքրության ստեղծելու միջամտին վերջ տալ չի լինի: Թերթում պետք ե մի թղթակցություն տեղավորել միջամտների վնասակարության և նրանց դեմ պայքարելու ձեւերի մասին: Կարելի յեւ նույնիսկ թերթին կից հրամիրել հակամիջատային հատուկ «կոնֆերանս»: Որինակ՝ թող բժիշկը զեկուցում տա միջամտների վնասների ու նրանց դեմ պայքարելու մասին: Իսկ յերբ գործն առաջ կդնա, կարելի յեւ մի քանի կարճ զրույց տեղավորել, վորով կոլտնտեսությունները կպատմեն, թե իրենք ինչպես են պայքարում միջամտների գեմ:

Միջամտները մենք որինակի համար վերցրինք: Կարելի յեւ վերցնել կենցաղային վորեւ այլ հարց և գրա միջոցով պայքարել բնակարանի մաքրության, կուրտուրականության համար:

Հարկավոր ե խոր թափանցել կենցաղի հարցերի մեջ: Մենք պետք ե ձգտենք վոչ միայն կուրտուրականի կուրտուրական մակարդակի ընդհանուր բարձրացմանը, նրա գրադիտության բարձրացմանը, այլ պետք ե ձգտենք, վոր նա կուրտուրական վերաբերմունք ունենա դեպի մարդիկ: Նախահեղափոխական գյուղում շատ տարածմած զգվելի մի սովորություն ե յեղել-կնույը ծեծել: Այժմ այդ սովորությունը վորպես կամոն վերցել ե: Կուրտուրականին ինքնուրույն մարդ ե դարձել: Վոչ վոք չի համարձակվի ծեծել նրան: Սակայն, ընդունենք, թե այդպիսի մի դեպք ե յեղել: Միթե՞ թերթը կարող ե լուսւթյան մատնել այդ: Անմիջապես պետք ե աղմուկ բարձրացնել այդ հարցի շուրջը և չանդստանալ, մինչեւ վոր մեղավորները պատժվեն:

Մեր պայմաններում, սակայն, կնոջը ծեծելը բացառիկ անհավատալի մի բան է: Բայց և այնպես, թերթը պետք ե իմանալի կոլտնտեսության կենցաղային հարցերը և մտածված ձեւով, առանց կոստաբար կոլտնտեսականների ընտանեկան գործերին խառնելու, քննարկման պետք ե դնի ամենասուր կենցաղային հարցերը, պահարակի հինը և պրոպագանդ մղի նոր, կուրտուրական փոխարարերությունների, կուրտուրական կոլտնտեսային կենցաղի համար.

կամ, վերցնենք Հայոյանքը։ Հարկ չկա յերկար խռովուայն մասին, վոր կուլտուրական մարդուն ամոթ ու անվայել և Հայոյանքը։ Չնայած դրան, մեզ մոռ գեռ Հայոյանքը տարածված է։ Կան մարդիկ, վորոնք նույնիսկ բարեկամաբար, մտերժաբար են Հայոյում։ Կարծում ենք՝ միանդամայն ժամանակն է, վոր կոլտնտեսային թերթերը վճռական պայքար սկսեն այդ այդակության դեմ։ Թե ինչպես—դրա մասին մենք չենք խոսի։ Յուրաքանչյուր խմբագիր, յեթե ցանկանա, ինքը կգտնի դրա միջոցը։ Համենայն դեպս պարզ է, վոր ժամանակն է կոլտնտեսային կենցաղում արմատացնել բարեկրթությունը և պայքարել կոպտության դեմ։ Մենք վոչ թե կեղծ քաղաքավարության մասին ենք խոսում, այլ մարդկանց շփոխարաբերությունների բարեկրթության մասին, վոր պիտի հիմնված լինի փոխազարձ Հարդարնքի վրա։

ԳԼԻԱՎՈՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՍՈՑԻՍԼԻՍԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ Ե

Մենք մեր դասախոսությունն ավարտում ենք։ Մենք շատ Հարցեր թվեցինք, վորոնցով պետք և զրազվեն պատի թերթերը։ Սակայն մենք խոսեցինք միայն սահմանափակ թվով Հարցերի մասին։ Մենք վոչինչ չասացինք քաղուսուցման մասին, գյուղատնտեսության համար մասսայական կաղրեր պատրաստելու մասին, չխոսեցինք չառ ուրիշ Հարցերի մասին ևս, վորովհետեւ այդ մեր դասախոսության ծրագրի մեջ չի մտնում։ Նրանց մասին խոսվել և նախորդ դասախոսություններում։ Սակայն, վորպեսզի այս դասախոսությունը կարդացողները աղելի լավ Հասկանան մեր արծարծած Հարցերը, վորպեսզի աղելի լավ ընթանեն, թե արդ Հարցերն ինչպես պիտի լուծեն թերթում, ավելորդ չի լինի մի անգամ ևս հիշեցնել, վոր կուլտուր — լուսովական թեմաների ամբողջ շըշանակը, ոկսած անդրագիտության վերացումից մինչև կենցաղային Հարցերը, մի նպատակ ունեն՝ մարդուն դաստիարակել սոցիալիստական վոզով։

Կոմունիստական կուսակցությունն տասնյոթերորդ կոնֆերենցիան յերկրորդ հնդամյակի խնդիրները նշելով՝ վորպես յերկրորդ հնդամյակի հիմնական խնդիրներից մեկը մատնանշեց հետեւյալը։

«Համ. Կ(բ)Կ տասնյոթերորդ Կոնֆերենցիան գրուած է, վոր յերկրի բնական վիթխարի հարստությունները, սոցիալիստական շինարարության բոլշեվիկյան տեմ պերը, բանվորների ու կոլտնտեսականների լայն մասսաների աճող ակտիվությունը և կուսակցության ձիչու զիծը յերկրորդ հնդամյակում լիովին ապահովում են սոցիալիստական տնտեսության արտադրողական ուժերի այնպիսի ծավալում, վորի հիման վրա վերջնականորեն պիտի վերացվեն կապիտալիստական տարրերը կը ՀՄ-ում։ Կոն-

Փերենցիան գտնում է, վոր յերկրորդ հնդամյակի հիմնական քաղաքական խնդիրն է կապիտալիստական տարրերի ու ընդհանրապես դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարբերություններ ու շահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների վերացումն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության միջից, յերկրի վողջ աշխատավոր բնակչությունը անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ դարձնելը»:

Մենք տեսնում ենք, թե ինչպես անշեղորն ու համառորեն և իրականացվում այդ պատճական վորոշումը: Արագ տեմպերով աճում են յերկրի արտադրողական ուժերը: Ամրագնումը են կոլտնտեսությունները, աճում է արդյունաբեցությունը: Վերջնականապես վերացվում են դասակարգերը: Հաջողությամբ հաղթահարվում են կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ: Մենք պետք են անդադրում աշխատանք կատարենք մարդկանց վերադաստիարակության, նրանց սոցիալիստական գիտակցությունը զարգացնելու ուղղությամբ: Հենց այն ժամանք, վոր գյուղում կուլտուրական պահանջներն արդքան արագ են աճում, համոզիչ կերպով ապացույում են, վոր աճում են անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներ:

Դաստիարակչական աշխատանքը կուլտնտեսություններում պետք է լայնորեն հասկանալ: Պետք ե պայքարել կուլտուրականության զարգացման համար՝ կոլտնտեսային կյանքի անփառ բոլոր բնադրավառներում: Այստեղ մենք քննեցինք այդ աշխատանքի միայն մի մասը: Պատի թերթերն այդ գործին ձեռնամուխ պիտի լինեն բոլենիկներին հատուկ ամբողջ յեռանդով ու համառությամբ:

ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ ներկայումս կուլտուր-լուսավորական հարցերն առանձնապես սուբ են գրմում գյուղում:

2. Վո՞րն ե մեր՝ խորհրդային կուլտուրայի հիմնական տարրերությունը կատալիստալիստական յերկրների կուլտուրայից:

3. Վո՞րն ե կոլտնտեսային գյուղի կուլտուրայի արագ աճման հիմքը:

4. Պատի թերթն ինչից պիտի ոկտի կուլտուր-լուսավորական աշխատանքի լուսաբանումը:

5. Ինչպես պայքարել անդրագիտությունը լիովին արմատախիլ անելու և կիսագրագեաների կրթական մակարդակը բարձրացնելու համար:

6. Պատի թերթն ինչպես պիտի մարդկանց վարժեցնի շարժմանը թերթեր, գրքեր ու ժուռնալներ կարդալ:

7. Ինչի՞ց յե հարկանքոր գեղարվեստական գրականության ընթերցողների կոնֆերենցիան և ինչպես նախագատրաստել այդ կոնֆերենցիան պատի թերթի սպոնսությամբ:

8. Կոլտնտեսականների ընդհանուր գրագիտության բարձրացումն ի՞նչ նշանակություն ունի թերթատվության բարձրուցման և կուլտուրի տնտեսության բարելավման գործում:

9. Թերթն ինչի՞ համար և ինչպես կարող ե կոլտնտեսականների եքսկուրսիաներ կաղմակերպել դեպի քաղաք: Թերթում ինչպես ոգտագործել այդպիսի եքսկուրսիայի արդյունքները:

10. Վորո՞նք են յարձիթ-ընթերցարանի նշանակությունն ու խնդիրները, վորո՞նք են նրա թերությունները: Թերթն ինչպես պիտի լուսաբանի խրճիթ-ընթերցարանի աշխատանքը:

11. Ինչի՞ պետք ե խրճիթ-ընթերցարանի աշխատանքի պլան լինի և ինչպիսին պիտի լինի այդ պլանը:

12. Թերթն ինչպե՞ս պիտի լուսաբանի կոլտնահսային արումքի աշխատանքը :

13. Ի՞նչ պետք է անի կոլտնտեսային պատի թերթը՝ կինո-նկարների ցուցադրումը բարելավելու համար :

14. Թերթն ինչպե՞ս պիտի պայքարի կոլտնտեսությունում ռազմական բարելավելու համար : Ինչպե՞ս անել, վոր զարդարական ռազմական բարելու շարժումը :

15. Վո՞րն ե կոլտնտեսության մեջ գեղարվեստական ինքնազործունեյության աճման հիմնական պատճառը : Ինչո՞ւ յետքում ուրախ հանգստի և զվարճալից ժամանցի պահանջը :

16. Պատի թերթն ինչպե՞ս կարող ե նպաստել ինքնազործարվեստի զարգացմանը :

17. Կոլտնտեսային պատի թերթում ինչպե՞ս լուսաբանել կենցաղի հարցերը :

18. Վոր՞ն ե գյուղում կատարվող կուլտուր-լուսասվորական գողջ աշխատանքի գլխավոր խնդիրը :

Ա. 1936 թ.
Ակտ № 78.
Վկладն. լ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0143960

433

14987

ОГЧДНКР в АГР

Б. РЕЗНИКОВ

Стенная газета и культработа в колхозе
Издание КП(б)А «Хорурдаин Айастай»